



## Խմբագրական

### ԱԶԳԸ ԻՐ ՄՇԱԿՈՅԹՈՎ Է ԱԶԳ



Մշակոյթը հայ հոգիին ամենէն վաւերական հարստութիւնն է, անոր ամենէն հարազատ ցոյքը, հայելին: Անով կը սկսի ու կը վերջանայ ազգը: Անով կ'ապրի ու կը շնչէ ազգը: Մշակոյթին եւ ազգին միջեւ կապը ամենէն բնականն է, անմիջականը, ամենէն սերտը, ինչպէս է կապը ծնողին եւ զաւակին միջեւ...: Եւ այնպէս ինչպէս ժողովուրդն է որ իր ստեղծագործական երկունքով ծնունդ կու տայ անոր՝ իր բոլոր արտայայտչաձեւերուն մէջ, նոյնպէս ալ վերջինս՝ մշակոյթն է որ կը դառնայ մանասա հաց հանապազօրեայ, հոգեմտաւոր սնունդ, որ կը բաշխուի ժողովուրդի մը զաւակներուն անխտիր...

Մշակոյթ ըսելով կը հասկնանք առաջնահերթաբար լեզուն, որ հիմնական առանցքն է «ազգ» հասկացութեան..., քանզի սեփական մայրենի լեզուով է որ ազգը առաջնահերթաբար կը ճանչնայ ինքզինք, կ'արտայայտէ ինքզինք գերազանցօրէն: Լեզուն կը խտացնէ ազգին հոգեկերտուածքը, հոգեբանութիւնը, աշխարհընկալումը, նկարագիրը...անոր յոյզերն ու խռովքները, տագնապներն ու տուայտանքները, երազներն ու խտեւիւները...

Մշակոյթին մաս կը կազմեն ազգը բնորոշող բոլոր արտայայտութիւնները՝ երգն ու երաժշտութիւնը, գիրն ու գրականութիւնը, նկարչութիւնն ու ճարտարապետութիւնը, թատրոնն ու քանդակը, ձեռարուեստի բոլոր բնագաւառները...Տակաւին մշակոյթի բաղադրիչ են՝ ժողովուրդի մը բարոյական առաքինութիւնները, հոգեմտաւոր արժէքները, ապրելակերպն ու աշխարհայեացքը, նիստուկացը, վարքն ու բարքը, սովորութիւններն ու աւանդութիւնները...

Որքան ճիշդ ու դիպուկ է ըսուած. «Ազգի կոչումը մշակոյթ ստեղծելն է»: Այնպէս ինչպէս անհատի մը մտքի, ոգիի, հոգիի ճառագայթները կը բնորոշեն տուեալ անհատը, նոյնպէս ալ ազգի ոգիի, հոգիի, մտքի ճառագայթումները կը բնորոշեն ազգը...

Մշակոյթի արարումը, ստեղծագործական աշխատանքը՝ հնուց անտի, եղեր են մեր ապրելու կերպը, որ որդւոց-որդի փոխանցուել է դարէ դար: Ստեղծագործելու, արարելու, մաքառելու եւ պայքարելու ոգիով ենք մենք դիմակայել պատմութեան դաժան հողմերուն...Եւ վերապրել ու յարատեւել ենք պատմութեան մէջ, երբ բազում այլ ժողովուրդներ անցել են պատմութեան գիրկը: Վկայ՝ մեր պանծալի մշակոյթի արժէքները՝ մեր Ոսկեդարը, հրաշակերտ վանքերն ու եկեղեցիները, խաչքարերը, բիւրաւոր մատեանները...: Եւ ինչպիսի երկիւղած նուիրումով անոնց փարեր է հայ մարդը: Բերենք մէկ ցայտուն օրինակ. Եղեռնի ամենէն սեւ ու արհաւիրալից օրերուն, երկու հայ կիներ, թողած իրենց նիւթական ինչքը, Մշոյ վիթխարի ճամբանտիրը, որպէս մշակութային անզուգական արժէք մասնաւորաբար, կը փրկեն ու զայն կը հասցնեն Էջմիածին...: Եղեռնէն ետք ալ, մշակութապահպանումը դարձաւ ազգային գաղափարախօսութիւն, ազգափրկութեան զօրեղ երաշխիք՝ տարագիր Սփիւռքի գաղթօճախներուն մէջ եւ Մայր հայրենիքի, ուր չամլացան երբեք հայուն ստեղծագործ ոգին, արարելու կամքը, հոսանքն ի վեր թիավարելու կորովը...: Եթէ Տերեանն ու Թումանեանը, Չարենցն ու Բակունցը...ստեղծեցին հոգեւոր Հայաստանի կերպարը, Սփիւռքի մէջ ալ՝



Թեքեանն ու Շահնուրը, Շուշանեանն ու Օշականը եւ շատ ուրիշներ...վերստեղծեցին գերեվարեալ Արեւմտահայաստանի հոգեւոր պատկերը, անոր ոգեղէն բովանդակութիւնը...

Անոնք եւ միւսները լաւ հասկցան ու խորըմբռնեցին այն լուսաւոր ճշմարտութիւնը, թէ չկայ ազգ ու երկիր, եթէ չըլլայ մշակոյթը, անոր կենարար ու կենսաբաշխ ուժը, անոր ոգեղէն սլացքն ու խոյանքը, անոր գեղեցկութեան առիւնքն ու խորհուրդը, անոր ինքնուրոյն բոյրն ու թոյրը, դիմագիծը, որ մեզ կ'առանձնացնէ համաշխարհային քաղաքակրթութեանց խճանկարին մէջ...

Հայրենիքը ի՛նքը հոգեւոր, մշակութային տարածք է գերազանցօրէն...Եթէ զայն պարպես իր հոգեւոր-բարոյական-մշակութային արժէքներէն, որոնք դարձ-դար եւ սերունդէ-սերունդ կերտուէր են հոգիի եւ ոգիի յարատեւ տընութեամբ, յայնժամ հայրենիքը կը վերածուի սոսկ աշխարհագրական տարածքի, կամ սովորական բնակավայրի, զոր կարելի է փոխարինել մէկ այլ տարածքով..

Մշակոյթը, սակայն, ինչպէս բոլոր արժէքները անխտիր, ինքնապաշտպանութեան Էական կարիքն ունի, մասնաւորաբար ներկայիս Նիւթապաշտ, ընչաքաղց, օգտապաշտ, համաշխարհայնացման ամէն ինչ համահարթեցնող գլանին տակ....

Այսօր, արդեօ՞ք ճիշդ կը հերկուին մեր մշակոյթի «դաշտերը», հաւատարիմ հայեցի ինքնութեան դարաւոր աւանդներուն, հաւատարիմ մեր մշակութային դարաւոր արմատներուն...թէ՞ այժմեականութեան կամ նորարարութեան քօղին տակ, մեզի կը կը հրամցուի եւրոպականի կամ ամերիկեանի...կապկումը...: Մեր հեռուստացոյցի ամէնօրեայ հաղորդումները կրնան տալ հարցումին պատասխանը...

Որքան ճիշդ է ըսուած. «Եթէ կ'ուզես նուաճել երկիր մը, նախ նուաճէ անոր մշակոյթը», քանզի մշակոյթն է այն հենքը, որուն միջոցով կը կազմաւորուի ազգի ու երկրի հոգեմտաւոր դիմագիծը, առանց որուն ան կը դառնայ անդէմ, անդիմագիծ խառնամբօխ եւ տարածք...

Եւ թող չըսուի որ շուկային պահանջարկն է այս ահաւոր կապկումը, քանզի մշակոյթը սպառողական իր կամ ապրանք չէ, այլ ազգի մը հոգին, որ չի վաճառուիր, եթէ անոր տէրը իրաւ տիրութիւնը ընէ անոր, եթէ զայն պաշտպանէ ահեղ հողմերէն ու հոսանքներէն, զայն չվաճառէ յանուն երեսուն խեղճ արծաթի...

Ազգային մշակոյթն է հայրենիքի պետական անկախութեան հիմքերու հիմքը, հետեւաբար՝ զայն կենսունակ պահպանելը, անոր զարգացումը խթանելը պետական անկախութեան գերխիսնդիրն են...: Ի՞նչ անկախութեան մասին կրնանք մտածել, երբ հայ մշակոյթի Էատարր՝ հայերէնը, կ'աղաւաղուի ու կ'աղճատուի շարունակ՝ օտար ու խորթ բառերու ներխուժումով, երբ կը կորսուի հայոց խօսքի համն ու հոտը, հմայքն ու եղութիւնը...երբ հայերէն երգը կ'այլասերի ու կը շեղի իր բուն ակունքներէն, երբ հայրենական մթնոլորտը չի շնչեր հոգեւոր արժէքներու յաւերժական շունչով, բոյր ու թոյրով..., երբ ան տակաւ կը հոգեզրկուի եւ կ'ապամշակութացուի:

Անկախութիւնը կը հզօրանայ գերազանցօրէն մշակոյթի հզօրացումով...քանզի մարդ Էակը եւ ազգն ու երկիրը չեն կրնար միայն «հացիւ» ապրիլ...Որքան ճշմարտացի կը հնչեն Իսահակեանի թեւաւոր տողերը. «Ես ձեզ ասում եմ կը զայ ոգու սով եւ դուք կը քաղցէք ճոխ սեղանի մօտ, Կ'ելնէք մուրալու յափրած որկորով, Հրեղէն խօսքի, վեհ խօսքի կարօտ...»:



Հայ ազգի հարազատ պատկերը՝ անոր արարչագործ, ստեղծագործ աշխատասիրութեան մէջ եղած Է գերազանցօրէն: Անոր մշակութասիրութեան եւ մշակութաստեղծութեան մէջ, որով դիմակայած Է ան դարերու դաժան մարտահրաւերներուն, նոյնիսկ պետականութեան բացակայութեան պայմաններուն ներքոյ: Մենք պիտի յաղթահարենք մենք զմեզ, վեր ելլելով սուտ ու փուտ չարժէքներուն խնկարկելու, ուրիշը կապկելու քաղքենիական, սպառողական վարքագիծէն... Պիտի վերստանձնենք մերը արարելու սրբազան առաքելութիւնը, մեր արժանաւոր ներդրումը բերելով համաշխարհային քաղաքակրթութեան գանձարանին մէջ... քանզի ազգի բուն կոչումը մշակոյթ ստեղծելն Է, եւ անշուշտ՝ զայն կենսունակ պահպանելը... «օղի, ջուրի, հացի նման» Էական...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Կիպրահայ

### ԱԼԼԱ ԼԵՆՈՆԵԱՆԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ ՀԱՄԵՐԳԸ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ

Հայ երգը ամենէն հարազատ ցոյքն Է հայ հոգիին, անոր ցաւերուն ու յոյզերուն, տազնապներուն ու տուայտանքներուն, իղծերուն ու երազներուն... Անոր մէջ կը բաբախեն մեր ժողովուրդի սրտի զարկն ու արեան ձայնը, հոգիի հեւքը, հառաչը, խինդն ու ծիծաղը, սերն ու կարօտը...



«Արեւ, արեւ, հազար բարեւ» խօսքի, երգի վառ հնչիւններով Ալլա ԼԵՆՈՆԵԱՆ՝ հայրենի սիրուած երգչուհին, ամբողջ երեք ժամ կախարդական հմայքի տակ պահեց իր ունկնդիրները՝ Ուրբաթ, 28 Հոկտեմբեր 2016-ին, երեկոյեան ժամը 7:30- 10:30, Նիկոսիոյ Սթրովոլիսի քաղաքապետարանի ընդարձակ դահլիճին մէջ: Համերգը կազմակերպուած

Էր Կիպրոսի Հ.Ե.Մ. եւ Համազգային Միութեան կողմէ եւ կը վայելէր հովանաւորութիւնը Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեանի:

Նշենք որ Ալլա ԼԵՆՈՆԵԱՆ սիրուած ու բարձր գնահատուած Է մեր ժողովուրդին կողմէ՝ Մայր հայրենիքի մէջ, թէ Սփիւռքի տարածքին: Ան արդարօրէն արժանացած Է բազմաթիւ մրցանակներու : Հայաստանի Հանրապետութենէն ներս, ան կոչուած Է՝ «Լաւագոյն երգչուհի», «Լաւագոյն ժողովրդական երգչուհի»: 2008-Էն ի վեր, ան կը հանդիսանայ ՄԱԿ-ի UNICEF-ի Բարի Կամքի դեսպանը Հայաստանի մէջ: Ալլա ԼԵՆՈՆԵԱՆ արժանացած Է նաեւ Ֆ.Նանսէնի անուան շքանշանի, ՀՀ մշակոյթի նախարարութեան, ՀՀ ՊՆ «Վազգէն Սարգսեան» ոսկէ մետալներուն: 2011-ին, ան արժանացած Է Հայաստանի վաստակաւոր արտիստի կոչումին:

Հայ երգը՝ մերթ սիրավառ ու բոցաշունչ, մերթ յուսավառ ու լուսավառ, միշտ ու միշտ կենսահաստատ, միշտ ու միշտ Հայաստանահոտ, Հայաստանահամ, Հայաստանաբոյր, Հայաստանակարօտ, հնչեց այնքան սրտազին ու սրտաբուխ, այնքան անմիջական ջերմ հաղորդականութեամբ որ կարծես բեմ-հանդիսական, երգչուհի-ունկնդիր դարձեր էին



բառիս բուն իմաստով մէկ սիրտ, մէկ հոգի...միեւնոյն ապրումներով տրոփուն մէկ միասնական Մենք...

Այլա Լեւոնեան՝ ամբողջ համերգին, բաց ու տաք պահեց կապը՝ իր եւ ունկնդրին միջեւ, իր վարակիչ շունչով, խօսքով, զրոյցով, պատումներով եւ հոգեգրաւ երգերով, որոնց կ'ընկերանային բեմին ետեւ ցուցադրուող տեսաերիզները...

«Հայաստան», «Մշոյ աղջիկ», «Եարը սրտին եարա կու տայ», «Շալախօ», «Մայրիկիս»... երգերը յաջորդաբար կատարուեցան բացառիկ սրտառուչ ապրումներով, խոր յուզականութեամբ, հայրենակարօտ զգացումներով, արժանանալով բոլորին սիրաջերմ գնահատանքին, երկարատեւ ծափահարութեանց...



Աշուղական սիրուած երգերը, դաշնամուրի նուագակցութեամբ Տիկ. Չարա Բարխուդարեանի, հնչեցին այնքան սրտաբուխ, հոգեբուխ, սիրոյ վարակիչ յուզականութեամբ բաբախուն...ներկաներէն արցունքներ խլելով...

Մեջընդմեջ, երգի կատարումներուն ընկերակցեցաւ Համազգայինի «Սիփան» պարախումբը ( Պարուսոյց՝ Պրն. Գրիգոր Զելէշեան), որուն կատարումները անչափ ներդաշնակ ներկայացուեցան մատուցուած երգերու շունչին ու ոգիին հետ: Շատ տպաւորիչ էին յատկապէս՝ «Մոկաց հարսեր», «Նէնըմ նէ նէ» եւ այլ ժողովրդական երգերու երգ-պարային կատարումները...

Այլա Լեւոնեան յատուկ կերպով անդրադարձաւ Արցախեան պատերազմի յաղթանակին, հայ բանակին, հայ զինուորի անձնուրաց մարտունակութեան, սպարապետ Վազգէն Սարգսեանին, Ապրիլեան քառօրեայ պատերազմին եւ հնչեցուց անոնց նուիրուած սրտագրաւ երգեր, որոնց մէջ խրոխտ բոցկլտացին հայ անկոտորում ոգին, անգիջում կորովը, աննահանջ պայքարի կամքն ու վճռակամութիւնը...: «Մենք յաւերժ ենք մեր լեռների պէս, Դուք հողմերի պէս կը կորչէք վայրագ» բառերով ստեղծուած երգը յատկապէս հայրենասիրական բարձր տրամադրութիւն ստեղծեց բոլորին մօտ...

«Գորանի» եւ այլ զուարթ ու կենսահաստատ երգերու կատարումով վերջ գտաւ այս բացառիկ երեկոն, որ ներկաները իսկապէս ալ փոխադրեց հայրենի աշխարհ, հաղորդ դարձուց զանոնք անոր բոյր ու թոյրին, համ ու հոտին, ցաւ ու խինդին...այլեւ անկոտորում ոգիին ու անխափան երթի վճռակամութեան հետ...


Առօրեայ կեանքի հեւք ու վազքէն ձերբազատ, հայ երգերու այս բացառիկ համերգը վստահաբար դեռ երկար պիտի ապրի բոլորիս յիշողութեան մէջ եւ մեզ պարուրէ հայրենակարօտ վառ ապրումներով, հայ երգի սրտալիր տրոփիւնով, հայ խօսքի վարար շունչով, հայ հոգիի բիւրեղեայ փայլով....Բոլորին վարձքը՝ կատար:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Հարցազրոյց

### Մեղրին յանձնելու գաղտնի բանակցութիւններին մասնակցել է Ռոբերտ Քոչարեանը, Թուրքիան էլ առաջարկել է Մասիսը և Անին

Յոկտեմբերի 27-ի ահաբեկչութեան հետ կապուած, սակայն քրեական գործի քննութեան ընթացքում այդպէս էլ չուսումնասիրուած մի վարկածի վերաբերեալ է մեր հարցազրոյցը «Ղարաբաղ» կոմիտէի անդամ, 1991-1993 թուականներին ՀՀ Նախագահի ազգային անվտանգութեան գծով խորհրդական Աշոտ Մանուչարեանի հետ:



- «Յոկտեմբերի 27»-ի քրեական գործի քննութեան ընթացքում, ըստ Ձեզ, ի՞նչ կարելոր վարկած է, որ չի քննուել:

- Յոկտեմբերի 27-ի ահաբեկչութեան հետ կապուած, ինչպէս գիտէք, շատ հանգամանքներ, վարկածներ, խօսակցութիւններ կան, բայց ինձ համար շարունակում է չուսումնասիրուած գլխաւոր վարկած մնալ Մեղրիի փոխանակման տարբերակի հետ կապուածը:

Միացեալ Նահանգներում աշխատող, պետական համակարգի հետ Էապէս կապուած վերլուծաբան Պոլ Գոբլը Հայաստանում դեռեւս 1992 թուականին շրջանառութեան մէջ դրեց այդ տարբերակը: Կարելի է ասել, որ Միացեալ Նահանգները նրանով զոնդած էր անցկացնում, թէ Հայաստանն ինչպէս է վերաբերում այդ տարբերակին՝ Ղարաբաղի ու Լաչինի միջանցքի դիմաց Մեղրին տալու: Միանգամից ասեմ, որ Հայաստանի համար դա բացարձակ կործանում է, որովհետեւ մեր երկիրն այդ դէպքում յայտնուում է թուրքական տոպրակի մէջ, Մեղրին յանձնելով, կորցնում կապը Իրանի հետ: Հիւսիսում էլ Վրաստանի Մառնեուլի շրջանն ադրբեջանցիներով է բնակեցուած, իսկ Ջաւախքի հատուածում սկսել էին արագօրէն տեղաւորել մեսիսեթցի թուրքերին: Այսպիսով Հայաստանը յայտնուում էր մի ամբողջական օղակի մէջ, մեր երկրի ոչնչացումը դառնում էր ընդամենը ժամանակի խնդիր, դրա համար էլ պատերազմ պետք չէր, տնտեսական, ժողովրդագրական միջոցներով ժամանակի ընթացքում կը խեղդէին մեզ:

Միացեալ Նահանգների կառավարութիւնը կամ ԱՄՆ-ում ինչ-ինչ շրջանակներ այդ ծրագրով ուզում էին լուծել իրենց խնդիրը՝ ամբողջականացնել թուրքական շղթան, իրականութիւն դարձնել պանթուրքիզմի՝ Մեծ Թուրանի ծրագիրը, որով թուրքերը կը հասնէին մինչև Չինաստանի ուղղութեան պրովինցիան: Նպատակը նաեւ Չինաստանին խեղճացնելը, նրա վրայ ազդեցութեան Էական լծակ ձեռք բերելն էր:

- Այսինքն՝ ուզում էք ասել, որ Մեղրիի յանձնմանը դեմ լինելու պատճառով Վազգէն Սարգսեանի և Կարէն Դեմիրճեանի սպանութեան վարկածը «Յոկտեմբերի 27»-ի քրեական գործի և դրանից առանձնացուած մասի շրջանակներում չի՞ քննուել:

- Այո, այո, դա չի քննուել: 1992 թուականին Պոլ Գոբլի յիշեալ առաջարկից յետոյ, երկրորդ անգամ և արդէն փակ բանակցութիւնների ձեւով, որի մասին շատ քիչ մարդիկ են տեղեակ մեր հանրապետութիւնում, տուեալ խնդրին անդրադարձ եղել է 1998 թուականին: Հայկական կողմից բանակցութիւններին մասնակցել է Ռոբերտ Քոչարեանը, եղել են նաեւ



ամերիկացիները և ֆրանսիացիները, աւելի որոշակի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահներից ԱՄՆ-ի և Ֆրանսիայի ներկայացուցիչները: Այդ բանակցութիւնները, Մեդրիի փոխանակման տարբերակի գոյութիւնը ռուսական կողմին երկար ժամանակ զաղտնի են պահուել: Տարբեր մակարդակի հանդիպումներ են եղել, ոչ միայն Ռոբերտ Զոչարեանի հետ: Նրա յանձնարարութեամբ Հայաստանի դիւանագիտական կորպուսից, արտգործնախարարութիւնից մարդիկ վարել են փակ բանակցութիւններ, արտգործնախարարը տեղեակ է եղել այդ ամէնին: Խնդրի քննարկմանը, բանակցութիւններին հետագայում, ինչ-որ մի պահից միացել են նաեւ Թուրքիայի յատուկ ծառայութիւնների ներկայացուցիչները, որոնք յայտնել են, որ եթէ Հայաստանը համաձայնութիւն տայ այդ տարբերակին, Թուրքիան կը ճանաչի Հայոց ցեղասպանութիւնը, և որպէս փոխհատուցում, Հայաստանին կը վերադարձնի Մասիս սարը և Անին: Այսինքն՝ քանի որ դժուար գործարք պետք է լինէր, այն իրականութիւն դարձնելու համար կշիռն աւելացրել են: Ես գիտեմ, որ երբ յայտնի դարձաւ Մեդրիի տարբերակի քննարկման մասին, սկանդալային հարցադրումներ եղան, թէ սա ի՞նչ խայտառակութիւն է, սա Հայաստանի կործանումն է և այլն, Ռոբերտ Զոչարեանը մի նեղ շրջանակում արդարացել է, որ իրեն տարել են Կենտրոնական հետախուզական վարչութիւն, ցոյց են տուել ներկայիս Մերձաւոր Արեւելքի վերածնունդի այն յայտնի քարտեզը, որում Իրանն այն տեսքով, որ կայ, գոյութիւն չունի, կրճատուած է, և Մեդրիին սահմանակից Իրանի այդ հարաւային մասն Ադրբեջան է, այսինքն՝ մեր պլաններով այսպէս է որոշուած, դուք, միեւնոյն է, սահման չէք ունենալու Իրանի հետ, էլ ի՞նչ իմաստ ունի Մեդրիի պահելը:

Ես ինքս ամերիկացի տարբեր պաշտօնեաների հետ դրանից յետոյ բազմաթիւ հանդիպումներում շատ կարծի ձեւով այդ հարցը դրել եմ, փորձելով նրանցից ստանալ պատասխան, թէ ինչպէս կարող էիք մեզ ներկայացնել այսպիսի առաջարկ, որը մեզ համար, փաստօրէն, ոչնչացման ծրագիր է:

- Ե՞րբ են եղել այդ հանդիպումները:

- Առաջին անգամ նման հանդիպում եղել է 1999 թուականի հոկտեմբերի 27-ից յետոյ, վերջին անգամ՝ 2013 թուականին:

- Դուք գիտէի՞ք, որ Կարէն Դեմիրճեանը և Վազգէն Սարգսեանը դեմ են Ղարաբաղի դիմաց Մեդրիի յանձնելու ծրագրին:

- Այո: Ես հասկանալի պատճառով չասեմ այդ պաշտօնեայի անունը, բայց ինձ հոկտեմբերի 27-ի ահաբեկչութիւնից մի քանի ամիս առաջ, բայց երբ Կարէն Դեմիրճեանը Ազգային ժողովի նախագահն էր, նախագահի աշխատակազմից մի պաշտօնեայ բողոքեց, որ Արցախի հարցի լուծման մի հոյակապ տարբերակ կայ (ես հետագայում հասկացայ, թէ ի՞նչ էր այդ տարբերակը, դա խիստ զաղտնիք է, բայց այդ Դեմիրճեանն ի՞նչ մարդ է... Հարցրեցի, թէ ի՞նչ է եղել: Ասածի իմաստը մօտաւորապէս այն էր, որ նա շատ սահմանափակ մարդ է: Նրա պատմածի համաձայն, Կարէն Դեմիրճեանին առաջարկուել է Արցախի խնդրի կարգաւորման ինչ-որ հոյակապ տարբերակ (մեր գրոյցի համատեքստից տպաւորութիւնս այնպիսին է, որ առաջարկողը եղել է Հայաստանից): Դեմիրճեանի պատասխանները, որոնց մասին իմացայ դարձեալ Նոյն մարդուց, իրականում, սակայն, ոչ թէ սահմանափակ մարդու, այլ փորձառու պետական գործչի պատասխաններ են, որովհետեւ նա մի կողմից չի ուզեցել



մտնել անհարկի առճակատման մեջ, միւս կողմից՝ այդ առաջարկը, իրեն ուղղուած հարցը թաղել է Ազգային ժողովի որոշելիքի մեջ: Առաջարկուող տարբերակի առնչութեամբ նա ասել է՝ շատ լաւ, ես կը դնեմ քուէարկման և ձեզ կը յայտնեմ Ազգային ժողովի որոշածը: Ասել են՝ չէ, մեզ չի հետաքրքրում Ազգային ժողովի դիրքորոշումը, մեզ հետաքրքրում է ձեր անձնական կարծիքը: Դեմիրճեանը պատասխանել է՝ բայց իմ անձնական կարծիքն ի՞նչ կապ ունի, ես արտայայտում եմ Ազգային ժողովի կարծիքը: Այդ տարբերակն առաջարկողն ասել է՝ բայց մեզ նախապէս հետաքրքրում է ձեր կարծիքը: Դեմիրճեանի պատասխանը եղել է հետեւեալը՝ մենք կը քննարկենք Ազգային ժողովում, և ես որպէս Ազգային ժողովի նախագահ, կ'արտայայտեմ և կը պաշտպանեմ Ազգային ժողովի արտայայտած կարծիքը:

Ես այդ պահին չգիտեի, թէ Արցախի խնդրի լուծման ինչ տարբերակի մասին է խօսքը, գիտեի միայն, որ ինչ-որ տարբերակ կայ, որի իրականութիւն դառնալը Դեմիրճեանը դժուարացնում, արգելակում է, միայն հետագայում համապատասխան գնահատումից յետոյ հասկացայ, որ խօսքը եղել է Ղարաբաղի դիմաց Մեղրին յանձնելու տարբերակի մասին: Այս մասին հոկտեմբերի 27-ից յետոյ ասել եմ և Կարէն Դեմիրճեանի, և Վազգէն Սարգսեանի մերձաւորներին, Վազգէն Սարգսեանի եղբօրը՝ Արամ Սարգսեանին ասել եմ աւելի շուտ, վարչապետի պաշտօնում նրա նշանակումից կարճ ժամանակ անց: Իսկ Մեղրիի տարբերակի վերաբերեալ դեռ հոկտեմբերի 27-ից առաջ արդէն ինտենսիվ տեղեկութիւններ էի ստանում:

Հարցազրոյցը՝ Արթուր Յովհաննիսեանի

Նյութ Տեղեկատուական Հարթակ

Nyut.am

## Տեսակէտ

**Հայ լրագրողներու համահայկական 8-րդ համաժողովին առթիւ**

**Հայ մամուլին ողիսականը (Ժողովուրդի Արթուն Պահակը Ըլլալու Կոչումը Եւ Իշխանութեանց Խօսափողը Դառնալու... Ձեռնափութիւնը)**

Հայ լրագրողներու համահայկական 8-րդ համաժողովի լրատուութեան հետեւող ընթերցողներու ուշադրութենէն վստահաբար չվրիպեցան ՀՀ իշխանութեանց եւ անոնց քարոզչութիւնը կատարող լրատու միջոցներուն կողմէ մամուլյ նուիրեալներուն շնորհուած գնահատականի ու մեծարանքի վերամբարձ գեղումները: Նոյնիսկ նախագահ Սերժ Սարգսեան անձամբ միացաւ գովազդային քարոզչութեան իշխանական համերգին, երբ Հոկտեմբեր 24-ին ընդունելով համաժողովի մասնակիցները՝ ի միջի այլոց այսօրինակ լորձնաշուրթն գնահատականներ եւ «յանձնարարականներ» բաշխեց մամուլյ յառաջապահներուն:

— Դուք մեծ ուժ էք, դուք ձեր գործունեութեամբ մեզի վստահութիւն եւ եռանդ կու տաք, որպէսզի մենք կարենանք ուժերու առաւելագոյն գործադրութեամբ կատարել մեր

պարտականութիւնները: — Կը կարծեմ, թէ չափազանց կարելոր է միշտ հաւատարիմ ըլլալ լրագրական բարեխղճութեան: Շատ կարելոր է նաեւ որ մենք մեր ջանքերը կարենանք համատեղել, գտնել այն Էական խնդիրները, որոնց լուծման վրայ պէտք է վատնենք մեր հիմնական ներուժը եւ մեր կարողութիւնները: Հայաստանի նախագահը ի դէպ ընդգծած է նաեւ, թէ որքան սուր ըլլայ ճշմարտութիւնը ներկայացնող գրիչը, այնքան ան օգտակար կ'ըլլայ եւ չի վնասեր, իսկ Նոյն այդ գրիչը, լրագրական կարողութիւնները, լրատու միջոցներու ազդեցութիւնը անզգոյշ օգտագործելու պարագային՝ կրնան մեծ հարցերու ծնունդ տալ:

Նախագահ Սարգսեան անկասկած շօշափելի եւ քաջալերական պատճառներ ունի, որպէսզի իր գլխաւորած իշխանութեան համակարգին չարաշահումները, խաթարուածութիւնը եւ ապիկարութիւնը միայն հարեւանցի դատապարտող մամուլն ու լրագիրները այսքան գոհունակ ողջունէ: Առայժմ այսքանը՝ համաժողովին ընկերացած իշխանական քարոզչութեան մասին: Անշուշտ ակելորդ է նշել, եւ ոչ ոք կը տարակուսի, որ հայ մամուլն ու զանգուածային լրատու միջոցները իրաւամբ արժանի են ամենայն դրուատիքի: Ի վերջոյ, հայ լրագրողները, թղթակիցները, հրապարակագիրները եւ խմբագիրները արժանաւոր ախոյեաններն են մեր ժողովուրդին՝ ազգային-քաղաքական եւ ընկերային-քաղաքացիական առումներով գիտակից, արթուն եւ պահանջատէր հանրային կարծիք կազմաւորելու եւ առաջնորդելու անփոխարինելի առաքելութեան: Այսքանն ալ՝ հայ մամուլին արժանին մատուցանելու ազգային նախանձախնդրութեան մասին, մանաւանդ որ



Հայ լրագրողներու 8-րդ համաժողովը Նուիրուած էր Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց կրկնակի 25-ամեակին: Բայց ինչպէս որ հայ մամուլի հայրենական խիզախ ձայներէն Թաթուլ Յակոբեան համաժողովին առիթով դիտել կու տար՝ «...շատ վատ է, որ Հայաստանի ներքին խնդիրները երբեք չեն դառնում լրագրողների համահայկական համաժողովների քննարկումների նիւթ: Թերթէք բոլոր ութ համաժողովների օրակարգերը եւ չէք գտնի ծանրակշիռ ելոյթներ Հայաստանի եւ Սփիւռքի համար

այնքան կենսական մարտահրաւերների մասին, ինչպիսիք են կոռուպցիան, անարդար ու կեղծող ընտրութիւնները, քաղաքական ու տնտեսական մենաշնորհները, Հայաստանը մաշող ու արիւնաքամ անող արտագաղթը: «Քար անտարբերութիւն Հայաստանում մարդու իրաւունքների խախտումների, ապօրինութիւնների, ժողովրդավարութեան պակասի ու բազմաթիւ այլ սպառնալիքների ու մարտահրաւերների մասին, որոնք պէտք է հետաքրքրեն սփիւռքահայ մամուլին»: Թ. Յակոբեան նաեւ մտահոգութեամբ դիտել կու տայ, որ «...լաւ չէ, երբ սփիւռքահայ լրագրողները չեն ցանկանում կամ չեն հետաքրքրում հանդիպելու ընդդիմադիր կուսակցութիւնների ներկայացուցիչների, մարդու իրաւունքների պաշտպանութեան հարցերով զբաղուող մասնագետների, անկախ, ոչ-իշխանական քաղաքագետների ու տնտեսագետների հետ: Դա անհրաժեշտ է Հայաստանում տիրող իրավիճակը ամբողջութեամբ, բոլոր գոյներով ընկալելու համար: «Տպաւորութիւն է ստեղծուում, որ սփիւռքեան լրատուամիջոցներին հետաքրքրում է Հայաստանի եւ Արցախի





իրականութեան միայն իշխանական մասը: «Յուսանք, որ Լրագրողների համահայկական յաջորդ՝ 9-րդ համաժողովի օրակարգը կը ծածկի նաեւ Հայաստանի ոչ-իշխանական կէտը, իսկ գեկուցաբերների շարքում կը լինեն նաեւ այդ ոչ-իշխանական կէսի ներկայացուցիչներ:

«Ամենաթունդ եւ հայրենասիրական կենացների պահին անգամ սթափ ձայնը օգտակար է»:  
Հայրենի հրապարակագիրին նկատողութիւնները անկասկած արձագանգ կը գտնեն ընթերցողին մօտ՝ ի հեճուկս հայ մամուլի եւ զանգուածային լրատու միջոցներու իշխանական քարոզչութեան «խրախուսած»... լռութեան եւ անտարբերութեան: Որքան ալ չուզենք համաձայնիլ Թաթուլ Յակոբեանի այն ընդհանրացումին հետ, թէ սփիւռքահայ լրագրողները չեն հետաքրքրեր Հայաստանի ներքին խնդիրները եւ, ընդհակառակն, զանոնք կը հետաքրքրեն «միայն իշխանական մասը Հայաստանի եւ Արցախի իրականութեան», այդուհանդերձ՝ դառն իրողութիւնը հիմք կու տայ այդօրինակ հայրենական ընդհանրացումին: Փաստօրէն Հայ լրագրողներու համահայկական 8-րդ համաժողովը ըստ արժանւոյն օրակարգի վրայ չբերաւ եւ հաւաքական իր գնահատականը չտուաւ վերջին վեց ամիսներու ընթացքին Հայաստանն ու Արցախը, այլեւ՝ ամբողջ հայաշխարհը տագնապեցնող ծանրակշիռ վերքերուն նկատմամբ հայ մամուլի եւ լրատու միջոցներու ցուցաբերած վերաբերումին... Ո՛չ Ապրիլեան չորսօրեայ պատերազմին առիթով ՀՀ իշխանութեանց բարձրագոյն հարթակներէն հնչած անհիմն ինքնարդարացումներուն շուրջ մամուլին եւ լրատու միջոցներուն ձեռնպահ լռութիւնը համաժողովին քննարկման եւ անաչառ ու պատասխանատու գնահատականին նիւթ դարձաւ, ո՛չ ալ Յուլիսեան «Սասնայ ծռեր»-ու յուսահատական եւ ծայրայեղական ծառայման ամբողջ ողբերգութեան ընթացքին հայ մամուլին եւ լրատու միջոցներուն առաւելապէս իշխանութեան քարոզչական խօսափողը դառնալու վարքագիծը ինքնաքննադատութեան արժանացաւ համաժողովի ընթացքին: Թերեւս անարդար է համաժողովէն ակնկալել այդօրինակ անաչառ քննարկումն ու արժեւորումը, երբ բացայայտօրէն այդ նիւթերը «խորհրդապահական» պիտակաւորման տակ դրուած են հայ մամուլին եւ լրատու միջոցներուն կողմէ՝ սպասելով որ իշխանութեան քարոզչամիջոցները իրենք հանրային կարծիքին «հրամցնեն» իրենց հաշիւներուն ծառայող «լրատուութիւն»-ը: Այսինքն՝ հայ մամուլն ու լրատու միջոցները կ'ապրին լրջագոյն ողիսականի նորօրեայ փուլ մը, ուր խորհրդային ամբողջատիրութեան փլուզումէն եւ այսպէս ըսուած «ազատ մամուլ»-ի շղթայագերծումէն քառորդ դար ետք, ի Հայաստան թէ Սփիւռս աշխարհի՝ անոնք յայտնուած են ազատ-շուկայական համակարգի բնորոշ կաշկանդումներու եւ կապանքներու ծանր բեռան տակ: Պատահական չէ, որ Հայ լրագրողներու 8-րդ համահայկական համաժողովին նուիրուած իր անդրադարձին մէջ, Փարիզի «Նոր Յառաջ»-ը քանի մը օր առաջ սրտցաւօրէն դիտել կու տար, թէ՛ «...Համաժողովը, խմբագիրներու եւ լրագրողներու իրարու հետ հանդիպման հաճոյքէն ու կարծիքներու ընդհանուր փոխանակումէն անդին երթալու շատ կարելիութիւններու դուռ չի բանար, պետականութեան ամրապնդումին չի ծառայեր այնքան ատեն, որ ան կը մնայ պետական հովանաւորութեան ենթակայ ու անոր քարոզչական նպատակներուն ծառայող: Լրատու միջոցները հետաքրքրական կը դառնան, երբ կ'անկախանան: Կարելիութիւնը կ'ունենան իրենց ամբողջական նպաստը բերելու պետականաշինութեան՝ խօսքի, մտածումի եւ գործելու ազատութեան ամրապնդումով»: Այո՛, հայ մամուլի կոչումին եւ ազգային առաքելութեան հիմնական Այբուբենին վերադառնալու մարտահրաւերը շեշտելու եկաւ համաժողովը՝ առաւելաբար իշխանութեանց խօսափողի իր տխուր ընթացքը հանդիսադրելով: Բայց պարզուած դառն վիճակը միայն լրագրողներու, հրապարակագիրներու եւ նոյնիսկ խմբագիրներու մեղքով չէ: Ոչ ալ սփիւռքեան եւ հայրենական ընկալումներու կամ մօտեցումներու տարբերութիւնը կրնայ բաժանարար գիծ



Նկատուիլ այն առումով, թէ ինչո՞ւ հայաշխարհի իրականութեան միայն «իշխանական երեսը» կ'արժանանայ մամլոյ արձագանգին: Վերջը շատ անելի խոր է եւ ուղղակի աղերս ունի Հայաստանի վերանկախացումէն ասդին ծայր առած ազատութիւն եւ ժողովրդավարութիւն, իրաւական պետութիւն եւ քաղաքացիական հասարակութիւն արմատաւորելու ընդօրինակման եւ կապկումի մեծ ու կործանարար... խաղին հետ:

**ՆԱԶԱՐԵԹ ՊԵՐՊԵՐԵԱՆ**

«Ասպարեզ», Նոյեմբեր 2

**Հայաստան Եւ Սփիւռք Նոր Մեկնարկի Որոնումներու Մէջ**

**Յարութ Սասունեան**

**«Քալիֆորնիա Քուրիըր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր**

[www.TheCaliforniaCourier.com](http://www.TheCaliforniaCourier.com)

Հայաստանի անկախացումէն ի վեր, հայկական աշխարհը բաժնուած է երեք տարբեր մասերու. անոնք, որոնք կ'աջակցին իշխանութիւններուն կամ ինչ որ չափով փոխադարձաբար կը գործակցին անոնց հետ, բազմազան ընդդիմադիր խմբաւորումներ, եւ անոնք, որոնք անկախ են կամ անտարբեր: Ցաւօք, գրեթէ ոչ մէկ ջանք գործադրուած է այս խումբերուն միջեւ խզումը ջնջելու համար: Ընդհակառակն, եղած են կոպիտ վիրաւորանքներ, մեղադրանքներ եւ առճակատումներ:



Հակառակ Հայաստանի իշխանութիւններու եւ ընդդիմութեան ունեցած տարբեր առաջնահերթութիւններուն՝ հայերը ամենուր ունին ընդհանուր շահեր եւ մտահոգութիւններ՝ կապուած տնտեսութեան, մարդու իրաւունքներու, օրէնքի գերակայութեան, արցախեան հակամարտութեան, արտագաղթի, Սփիւռքի գոյապայքարի, եւ Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ

Թուրքիայէն արդարութեան պահանջի ապահովման հետ: Իշխանութիւնները զբաղած են երկրի կառավարման եւ Հայաստանի ու Արցախի հանրապետութիւններու սահմաններու ապահովմամբ, իսկ ընդդիմութիւնը կեդրոնացած է փտախտի դէմ պայքարի եւ թափանցիկ ընտրութիւններու իրականացման վրայ:

Վերջին ամիսներուն, անցնող 25 տարուան ընթացքին առաջին անգամ ըլլալով կարելի է յոյսի առաջին նշոյլը տեսնել, այն, որ լուրջ փոփոխութիւններ կ'երեւին Հայաստանի հորիզոնին: Իշխանութիւնները, հաւանաբար Երեւանի մէջ տեղի ունեցած վերջին ցնցումներու եւ յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններու պատճառով, կարծես թէ մտադիր են իրականացնելու լուրջ բարեփոխումներ՝ իբրեւ վարչապետ նշանակելով ձեռնհաս փորձագետ մը եւ անոր քարթ-պլանշ տալով: Իրօք, կարճ ժամանակի մէջ նոր վարչապետը գործէն դուրս դրաւ քանի մը անձեռնմխելի պաշտօնեաներ...

Քանի որ վարչապետ Կարէն Կարապետեան եռանդուն կերպով առաջ կը շարժի վաղուց ի վեր ուշացած բարեփոխումներով, ան մեծ շփոթ յառաջացուց թէ՛ որոշ իշխանաւորներու, եւ



թէ ընդդիմութեան շարքերու մէջ: Վարչապետը իր գործողութիւններով անհանգստացուց բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնեաներ, որոնք կը կարծէին, թէ իրենց գործն ու եկամուտները յաւերժական են: Այդ ընթացքին վարչակարգի հակառակորդները եւս դժուարին կացութեան մէջ էին, թէ ինչպէս արձագանգել եւ ինչ ակնկալել կառավարութեան նոր ղեկավարէն: Ոմանք շտապեցին իրենց անվտանգութիւնը արտայայտել՝ նշելով, թէ ոչինչ կը փոխուի, քանի դեռ ներկայ ղեկավարները կը մնան իրենց պաշտօններուն վրայ, իսկ ուրիշներ որդեգրեցին աւելի խելամիտ սպասողական կեցուածք...: Վարչապետը վերջերս զգուշացուց բոլոր կողմերը՝ ըսելով, որ նոյնիսկ մէկ յաւելեալ օր չի մնար պաշտօնի վրայ, եթէ տեսնէ, որ իր ջանքերը ապարդիւն են...

Վերջերս տեղի ունեցած մէկ այլ նշանակալի զարգացումը Սփիւռքի վերագարթնումն էր երկարատեւ նիրհէն: Անցեալ Սեպտեմբերին, 30 նշանաւոր հայեր, ներառեալ՝ Սերժ Թանքեան, Աթոմ Էկոյեան, Ալեքսիս Օհանեան, Զրիս Պոռիջալեան, Էրիք Պօղոսեան եւ Սեպուհ Սիմոնեան, հանդէս եկան միջնորդագրով՝ [change.org](http://change.org) կայքի վրայ, «Արդարադատութիւն Զայաստանի մէջ» խորագիրով: Մինչեւ այսօր աւելի քան 4000 մարդ միացած է այդ ստորագրահաւաքին:

Մի քանի օր անց, զանատահայ դերասանուհի Արսինէ Խանճեան հանդէս եկաւ խիստ քննադատական բաց նամակով՝ Երեւանի մէջ 27 Յուլիսին բողոքի ցոյցին մասնակցելու համար ձերբակալուելէ ետք: Խանճեան ուրուագծեց իշխանութեան թերութիւնները՝ կոչ ընելով սփիւռքահայերուն «երկմիտ հանդիսատեսներ» չըլլալու եւ մասնակցելու Զայաստանի ընկերային վիճակի բարելաւման գործին:

28 Հոկտեմբերին, 23 ականաւոր հայեր, ներառեալ՝ Աբել Աղանբեկեան, Շառլ Ազնաւուր, Էտուարտ Ճերեճեան, Վարդան Գրիգորեան եւ Ռուբէն Վարդանեան, հանդէս եկան մէկ այլ բաց նամակով՝ կոչ ընելով «աշխարհաքաղաքացի հայերուն ... միաւորուելու եւ միասնաբար կերտելու Զայաստանի ապագան»: Ստորագրողները կոչ ըրին «բոլոր հայերուն՝ ազգի ընկերային, տնտեսական, մշակութային եւ արհեստագիտական ուժը վերականգնելու ուղղութեամբ երկարաժամկետ ներդրումներ իրականացնելու՝ առանցք ունենալով Զայաստանը»: Բաց նամակը հրապարակուեցաւ «Նիւ Եորք Թայմզ» եւ «Զայաստանի Զանրապետութիւն» թերթերուն մէջ:

Զայաստան, իրօք, կարիքը ունի Սփիւռքի հետ լիարժէք համագործակցութեան, որպէսզի իրականացնէ վերոնշեալ միջնորդագրի եւ բաց նամակներու մէջ առաջարկուած բոլոր բարեփոխումները: Կառավարութիւնը պէտք է ողջունէ բոլոր հայերու մասնակցութիւնը երկրի ընկերային, տնտեսական, քաղաքական եւ ռազմական կառոյցներու բարելաւման գործին՝ արդար, բարգաւաճ, լաւ կառավարուող եւ ապահով Զայրենիք կերտելու համար...

Զայաստանը բարձր զարգացած եւ ժողովրդավարական երկիր դարձնելու միակ ճամբան է՝ ողջունել ամբողջ աշխարհի 10 միլիոն հայերու առաւելագոյն թիւով ներգրաւուածութիւնը, անկախ անոնց բնակութեան վայրէն: Քանի որ Զայաստան (ներառեալ՝ Արցախ) համայն հայութեան Զայրենիքն է, ուստի իւրաքանչիւր հայ իրաւունք ունի եւ պարտաւոր է նպաստել անոր Վերածնունդին...

Վերոնշեալ միջնորդագրին եւ բաց նամակներուն մէջ բացակայող հիմնական գործօնը Սփիւռքի կազմակերպման համար անհրաժեշտ այն մեքանիզմն է, որ հնարաւորութիւն պիտի տայ պահպանելու Սփիւռքի սեփական գոյութիւնը, միաժամանակ ընդլայնելով անոր



Խիստ կարեւոր աջակցութիւնը Հայրենիքին՝ ծրագրուած եւ համակարգուած ձեւով: Այս հրատապ հարցի իրականացման համար, հայերը պետք է ստեղծեն ժողովրդավարական ճամբով ընտրուած սփիւռքեան կառոյց մը, որ իր ներկայացուցիչները պիտի ունենայ Հայաստանի խորհրդարանին մէջ...

Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան

Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

## Հայաստանի եւ Սփիւռքի եւ Սփիւռքներու ընկերութիւնը կը ճահճանայ, երբ չկայ յանդգնող քննադատութիւն

### Յ. Պալեան

#### Երեւան

Կրնա՞ք պահ մը երեւակայել, թէ ի՞նչ կ'ըլլար այսօր մարդկութեան պատկերը, եթէ ընդունուած ճշմարտութիւնները եւ կացութիւնները անփոփոխելի մնացած ըլլային, անոնք հարցականի տակ չդրուէին, եղած չըլլային այլախոհներ, քննադատութիւններ:



Քննադատելու կարողութիւնը առաքինութիւն է, առաքինութիւն բառին հռոմէական իմաստով, virtus, հոգեկան ուժ: Անցեալին ալ գրած եւ խօսած եմ այս եական հարցի մասին: Ոչ ոք կը զարմանայ, որ Քամչաթքայի իշխանութեան եւ կառավարիչին մասին քննադատական խօսք չենք ըսեր: Քանի որ տեղեկութիւն չունինք, ոչ այդ շրջանի տնտեսութեան,

ոչ մշակոյթին, ոչ լաւին եւ ոչ վատին մասին: Կրնանք խօսիլ, եթէ հոն տեղի ունենան տեղական-տեղայնականէ տարբեր դէպքեր, որոնք կը հետաքրքրեն ընդհանրապէս աշխարհը եւ մարդկութիւնը:

Կը քննադատենք երբ տեղեակ ենք, երբ յանձնառու ենք, երբ կացութեան մէջ ներառուած ենք՝ հեռուէն կամ մօտէն: Երբ հայկական կացութեան մէջ ենք, որպէս կրող եւ կամայակամայ դերակատար, կարծիք կ'ունենանք, ակնկալութիւն, ձգտումներ: Իսկ եթէ կը տեսնենք լաւը կամ վատը, կրնանք խօսիլ, քննադատել, պահանջներ ունենալ: Նման վերաբերում ունեցող անդամը իր հաւաքականութեան թշնամին չէ: Յոռեգոյն վիճակը ոչ թէ քննադատութիւնն է, այլ անտարբերութիւնը, յուսալքումը, հրաժարումը: Ոչ մէկ հաւաքականութիւն սառած է, միշտ բարելաւման կարիք կայ, բարօրութեան, երջանկութեան եւ իրաւունքներու յարգումի:

Անմիջապէս ճշդում մը պետք է ընել. քննադատութիւնը հիմնաւորուած պետք է ըլլայ, այլապէս ան կ'այլասերի, կը դառնայ գրպարտութիւն, բամբասանք, ցեխարձակում, ամբոխ զուարճացնող ըսի-ըսաւ, ասէ-կոսէ: Յաճախ կը մտածեմ նախ քան Քրիստոս հինգերորդ



դարու Աթենքի «ակորա»յի մասին, ուր մարդիկ ազատօրէն կը խօսէին, կը քննադատէին, կը խօսէին նոյնիսկ գիւղացիները եւ ստրուկները: Ճշմարտութիւնը ոչ ոքի մենաշնորհն է, ոչ բանակի հրամանատարին, ոչ թագաւորին, ոչ կրօնականին եւ ոչ ալ դրամատերին: «Վարդապետն ասաց»ը (magister dixit) յառաջդիմութիւնը եւ ճշմարտութեան բացայայտումը խափանող վերաբերում է, ընկերային չարիք: Այդպէս կը վերաբերին անարժան դիրքապաշտները, եւ շահախնդիրները:

Թեւ, անցեալին եւ այսօր, միշտ ալ եղած է ճշմարտութիւն եւ իրաւունք ինքնասեփականաշնորհելու փորձութիւնը, որ ախտն է հին եւ նոր ջրջականութիւններու, «Եսթեյլիշմընթ»ներու, որոնք ուզած են տեսել բիրտ ուժով, դրամի ուժով, դիրքի չարաշահումով, կամ մեքենայութիւններով (կոմբինացիա), մինչեւ որ ժողովրդային ցասումը ալիք հրապարակը:

Ինչպէ՞ս կարելի է քննադատական վերաբերում չունենալ երբ կ'ապրինք հայկական կացութեան մէջ, երբ որպէս անհատ եւ որպէս ազգ իրաւագրկուած ենք, ենթակայ ենք ինքնութեան կորուստի, անհաւասարութիւններու զոհ ենք: Այդ բոլոր բացասականութիւնները ունին ներազգային եւ արտաքին պատճառներ, որոնց դէմ պէտք է պայքարիլ վերականգնելու եւ գոյատեւելու համար, ձեռք բերելու համար զարգացման եւ բարօրութեան իրաւունքներ:

Վերջնականօրէն պարտուածները եւ պարտութեան հետ հաշտուածները կը դադրին քննադատելէ, քանի որ եզրակացուցած կ'ըլլան, որ ելք չկայ: Քննադատութիւնը կը մերժեն եւ չարիք կը համարեն բոլոր անոնք որոնք կը վախնան սպառնալիքէ իրենց դիրքերուն, շահակցութիւններուն, իրենց շուրջ հիւսուած անփոխարինելիութեան առասպելներուն:

Կը քննադատուին թերացումները, ձախողութիւնները, սխալ ընտրութիւնները, չարաշահումները, արժէքներու արհամարհանքը, եսասիրութիւնը, ընչաքաղցութիւնը, փառասիրութիւնը, անբարոյութիւնը, անպատասխանատուութիւնը... Այս բացասականութիւններու շարքը կարելի է երկարել: Պէտք է քննադատել ընկերութիւնը եւ մարդը պաշտպանելու համար, նոյնիսկ պաշտպանելու համար անհատը՝ ինքն իրեն դէմ:

Առաջին հերթին սխալներու համար քննադատելի են պատասխանատուները: Անոնք ըլլան ընտրուածներ, գահաժառանգներ, թէ ինքնակոչիկներ: Եթէ երկրի մը մէջ գործազրկութիւնը համաճարակի բնոյթ ունի, պատասխանատուն հանրային պարտեզի պահակը չէ, այլ օրուան իշխանութիւնը: Եթէ կուսակցութիւն մը համախոհներ կը կորսնցնէ կամ չի յաջողիր հանրութեան վստահութիւնը շահիլ, հարկ է քննադատել անոր ղեկավարութիւնը եւ լուսարձակի տակ առնել անոր առաջադրանքները, որոնք կրնան օրուան պահանջին անհամապատասխան ըլլալ:

Այսպէս, երբ սփիւռքներու մէջ հայերէնը տեղի կու տայ, երբ հոն ուր հայկական վարժարաններ կան եւ հայ ընտանիքներ իրենց զաւակները օտար վարժարաններ կը դրկեն, քննադատութիւն-քարոզչութիւնը իր թիրախները ճիշդ պէտք է ընտրէ: Ինչպէ՞ս եւ ինչո՞ւ այդ նահանջը տեղի կ'ունենայ: Տեղի կ'ունենայ այն պատճառով, որ վստահութեան խախտում կայ, օրինակելի չեն ղեկավարները իրենց բարքով եւ վարքով: Երբ այս կամ այն աստիճանի ղեկավարը իր զաւակը կը յանձնէ օտար վարժարանի, ինչո՞ւ զարմանալ եւ դատապարտել համեստները:



Երբ քաղաքական կազմակերպութիւն մը կը փորձէ տեսել ամբոխավարութեամբ, բարձրախօսներու աղմուկով, չի յաջողիր իր շուրջ համախմբել մտաւորականութիւնը, որ ընկերութեան շնչերակն է, ան կը ճապաղի, կը դադրի նայելէ դէպի ապագան, անցեալի պատկերներով ինքնահաստատում կը փնտռէ, նպատակները կը նուաղին եւ կը մնան եսական շահերը:

Այսօր, մեր ժողովուրդը ունի հիմնախնդիրներ, զորս պետք է առանձնացնել եւ դարձնել իրաւ քաղաքականութեան առանցք: Այդ խնդիրները, Հայաստան եւ սփիւռքներ, խորհրդածողովներով, տօնակատարութիւններով եւ ամբոխ զուարճացնող փող-թմբուկով չեն լուծուիր: Գեղեցիկ խօսքերը ցաւագրկող դարմաններ են, երբեմն այդքանն ալ չեն, հիւանդը իսթրոլ դեղի (placebo) կը նմանին: Այդ հիմնախնդիրները յաճախ երկրորդական կը համարուին թաղային-տեղայնական պատճառներով, ինչպէս կ'ըսուի, մարդ չխրտչեցնելու եւ կամ ժամանակավրէպ մրցակցութիւններու պատճառով:

Ժամանակն է, որ մեր հասակները չափուին հայրենադարձութեան եւ հայադարձութեան իրաւ քաղաքականութեան յաջողութեամբ: Պարզ չէ միթէ՞, որ հայ ժողովուրդի ապագան ոչ Պահամասի, ոչ Հոնոլուլուի եւ ոչ ալ Նոր Չելանտայի մէջ է: «Ծագումով հայեր»ով ազգ չի պահուիր, անոնց հայադարձութիւնը առանց ճակումներու հետապնդել ազգային քաղաքականութիւն է, անկախ հռչակաւորներու անուններուն քարոզչական շահագործումէն: Դար մը ամբողջ ցեղասպանութեան ճանաչման հոգեհանգստական-թափահարումներուն մէջ մնացինք, «յիշում եմ», հայրենահանման ոճիրի քաղաքական սրբագրութիւնը անիրականանալի համարելով, «պահանջում եմ»ը դատարկելով իր բովանդակութենէն:

Ժամանակն է, որ մեր հասակները չափուին Հայաստանի իւրաքանչիւր թիզ հողի բնակեցումով, ոչ միայն խանդավառուելով զքօսաշրջիկները զուարճացնող գեղատեսիլ Երեւանով: Բնակեցումը ճառ չէ, այլ բարօրութիւն իւրաքանչիւր թիզ հողի վրայ աշխատանքի ստեղծումով: Եւ խօսիլ մեր ժողովուրդին ճշմարտութեան լեզուով, անձի օրինակով, դատափետելով կեղծը եւ կեղծիքը, հայրենիքի եւ ազգի հզօրացման հեռանկարով:

Երբեմն պետք է հրաժարիլ գիտնալ պղպջակներէ եւ ըսել՝ որ ազգի մեկութիւնը հայրենիքով եւ հայրենիքի մէջ կ'ըլլայ, Հայաստաններու հողին վրայ: Դուրսը դեռ ժամանակ մըն ալ կրնան տեսել «ծագումով հայ» հայասերներ, «այլ ծագումով» հայասերներու կողքին, որոնք եղած են եւ կան:

Հայկական կացութեան քննադատութիւնը չարակամութիւն չէ, թերեւս անհանգստացնող է, ապահովաբար՝ անհանգստացնող: Հիմնախնդիրներու մասին կարելի չէ խօսիլ շղարշներու ետին թաքնուելով, ակելին՝ լուծում գտնել: Միշտ պետք է մտածել այն մասին, որ Զամչաթքայի կառավարիչը չենք քննադատեր ոչ Երեւանի, ոչ Պէյրութի, ոչ Պոսթոնի եւ ոչ ալ Փարիզի մէջ: Զննադատութիւնը իմաստ, նպատակ եւ բովանդակութիւն կ'ունենայ ըստ իր թիրախին եւ հասցէին:

Զննադատութիւնը իրաւութիւն կը նուաճէ երբ ինքնախաբեութիւնը եւ անհորիզոն բարոյախօսութիւնը կը դադրին, եւ ծառը չի ծածկեր անտառը:



Անտառը՝ մեր անտառացած հիմնախնիրներն են, որոնք չեն լուծուիր placebo-ներով: Ծիշոյ այնպէս, ինչպէս ասեղ երկրաշարժի օրերուն, երբ եղան «բարեսէր» մարդիկ՝ որոնք հրապարակ եկան «Հայաստանի մանուկներուն շոքոլայ» դրկելու կարգախօսով... Ինչ որ վնասակար չէր, բայց...

«Շոքոլայ»ի բարեսիրութիւնը անօթին չի կերակրեր եւ «շոքոլայ»ի նախաձեռնութիւնները, բոլոր մակարդակներու, ապագայակերտ չեն կրնար ըլլալ: Զեն եղած:

## ԱՎՆԹԱՐԹՆԵՐ

Կեանքը շատ ուշ կը հասկնաս, կը խորզգաս, կ'իմաստնանաս... ճաշակելէ ետք անոր տաքն ու ցուրտը, խորշակն ու կարկուտը, բազում հարուածները... որոնք մէյ մէկ սպիտակ թել կը դառնան գլխուդ վրայ... մէյ մէկ ակօս ճակատիդ... Իմաստութիւնը իր բարձր գինը ունի, համակ կեանք մը՝ երբեմն, նուաճելու գէթ մէկ գագաթը անոր....



.....

Ինքնաքննադատութիւնը դրական լիցքեր կը հաղորդէ անհատին, փոխան ժխտականի, քանզի ան իր մէջ ունի նոր վճռակամութիւն, նոր յանձնառութիւն՝ դասեր քաղելու սեփական սխալէն, սխալներէն եւ խրատուիլ անոնցմէ... Բաւելի լաւ գալիքի մը կերտումին համար....

.....

Ամէն օր նոր մարտահրաւեր է ընթանալու կեանքի բարդ ոլորաններուն վրայ, գտնելու Բաւելի ճշմարիտ ճշմարտութիւն, Բաւելի գեղեցիկ գեղեցկութիւն, Բաւելի ազնիւ ազնուութիւն, Բաւելի բարի բարութիւն... Եւ այսպէս, կատարելագործելու մեր ընթացքը եւ կատարելագործուելու... ոգիի խոյանքով վսեմ, որ չունի աւարտ, քանզի երբեք պիտի չհասնինք այն բացարձակին, որուն կը ձգտինք... Եւ այդ խոյանքին մէջ է թերեւս կեանքի բուն իմաստն ու արժէքը....

.....

Ապագան հանրագումարն է ներկայ իրադարձութեանց, անոնց հանդէպ մեր վերաբերմունքի, մեր հակազդեցութեան... Մենք է որ մեր ներկայ արարքներով, մեր վարքագիծով՝ հաւաքական թէ անհատական, կը կերտենք ապագան քար առ քար... Եւ աղիւս: Հետեւաբար, մեզմէ իւրաքանչիւրը թերեւս պատասխանատու է ուղղակի թէ անուղղակի այն ապագային համար, որ գալու է....

.....

Բուն ճշմարտութիւնը գուցէ չըսուած խօսքին մէջ է... որ կը մնայ թաքնուած մեր ետեւեան խորքերուն մէջ եւ չի վերածուիր խօսքի, բառի, տողի... Համակ կեանք մը կը փնտռենք զայն, մերթ կը մերձենանք անոր, մերթ կը հեռանանք անկէ, մերթ անոր աղօտ անդրադարձը կ'ունենանք մեր սրտին ու մտքին մէջ... Պիտի կարենա՞նք երբեւէ գտնել զայն....



.....

Բռնութեամբ կարելի չէ լռեցնել արդարութեան կանչը, բռնութեամբ կարելի չէ ոտնակոխել արժանապատուութիւնը...բռնութեամբ կարելի չէ ճզմել ըմբոսութեան հրեղէն ոգին...Բռնութիւնը անելի եւս կ'արծարծէ, կը բոցավառէ պայքարի հուրը սրբազան...Բռնութիւն ի գործ դնողը պարտուած է ի սկզբանէ...

.....

Կաղապարուած, անազատ միտքը խորթ աչքով կը նայի ազատ, աննախապաշար մտքին, չի հանդուրժեր զայն եւ հազար ու մէկ պատրուակ կը փնտռէ վարկաբեկելու համար զայն...Սողունը պիտի կարենա՞ր երբեւէ նայիլ ազատ ճախրող արծիւին, հիանալ անով, թելեր առնել եւ անոր նման թռչիլ լայնարձակ տարածութեան մէջ....

.....

Միտքի կղզիացումը գուցէ ամենէն մեծ սահմանափակումն է...ի հակադրութիւն մտքի բացութեան, լայնահորիզոն տեսադաշտի, տեսակետներու լայն փոխանակման եւ հաղորդակցութեան....Կղզիացած միտքը կը միտի, վերջ ի վերջոյ բացարձակացնելու իր ճշմարտութիւնը, կը լճանայ ու կը ճահճանայ ....Բաց միտքը նախապայման է ամեն յառաջդիմութեան....

.....

Մարդ Էակին գերագոյն հոգեկան կարիքներէն մէկը՝ ճիշդ հասկցուիլն է իր մերձաւորին թէ հեռաւորին կողմէ...սակայն, ներկայ հաղորդակցութեան մեր ժամանակներուն անգամ, կրնա՞նք ըսել թէ մարդ արարածը լրիւ հաղորդ է ուրիշին ցաւերուն ու յոյզերուն, տազնապներուն ու ապրումներուն, թախիծին եւ ուրախութեան....: Գուցէ դարի աղմուկն ու խառնաշփոթը, հեւքն ու վագքը խափանած ըլլան սիրտէ-սիրտ գացող այն գաղտնի ճամբան, որով մարդ Էակը անմիջականօրէն կրնայ բնագոյով իսկ զգալ ուրիշին ապրումները...սրտի վկայութեամբ ու բանականութեամբ....: Կարելի է թերեւս ըսել, որ մեր դարի ամենամեծ տազնապներէն մէկն ալ ա՛յս է...սրտերու բթացումն ու հոգիներու բրտացումը...

.....

Երկրայինէն դէպի երկնային թռիչքը մարդ անհատին համար միշտ եղեր է անհաս երազ՝ սկզբնական ժամանակներէն մինչեւ այսօր...Այսպէս է որ ստեղծուեր են արուեստները, կրօնները, փիլիսոփայութիւնը...որոնք գոյնի, գիծի, բառերու, հնչիւններու, աղօթքի, գաղափարներու լեզուով կը միտին մարդը վեր բարձրացնելու իր գետնաքարշ գոյութենէն դէպի գեղեցիկն ու վսեմը, դէպի Բարձրեալը, դէպի ճշմարիտը...Երկրային իր սահմանափակ գոյութենէն կամուրջ մը նետելով դէպի երկնայինը... դէպի իր գոյութեան ոգեկան ոլորտները....

.....

Շատ քիչեր կը մնան ազնուական մինչեւ վերջ, նոյնիսկ երբ ճակատագիրը զիրենք հարուածէ, նոյնիսկ երբ չար նախանձը զիրենք հալածէ, նոյնիսկ երբ չար լեզուները





յերիւրանքներ յօրինեն իրենց հասցէին...նոյնիսկ երբ...եւ բոլոր պարագաներուն: Նմաններն են որ կրեն մարդկային հոգիին համակ ճառագուն լոյսը....

.....

Տգիտութենէն կը ծնի ամբարտաւանութիւնը, տգիտութենէն կը ծնի մոլեռանդութիւնը, տգիտութենէն կը ծնի բացարձակատիրութիւնը, տգիտութենէն կը ծնի անհանդուրժողութիւնը եւ անկէ ածանցեալ ամէն չարիք....

.....

Քիչեր կը հասկնան հոգեկան ապրումի նրբութիւնները, երանգները....Մարդկային հոգին բազմաբեւեռ է, բազմաձաւ...Կը պատահի որ ամէնէն լուրջ պահին, նոյնիսկ ծանր պահին անգամ, լոյսի շող մը ժպիտի ճառագայթ բերէ մեր աչքերուն...Կը պատահի ալ որ ամէնէն ուրախ ու զուարթ պահին, տխրութեան ամպը ստուերէ մեր աչքերը...Հոգին կարելի չէ չափել հաշուարկներով, զայն պիտի զգալ պարզապէս....Մարդկային հոգին խորախորհուրդ է....

.....

Փառամոլութիւնը, աթոռամոլութիւնն ու շահամոլութիւնն են հաւանաբար այն ախտերը, որոնք մէկ ազգի զաւակները...եւ ոչ միայն....կը հանեն մէկը միւսին դէմ, իրարու կը թշնամացնեն երբեմն նոյնիսկ հարագատներ....: Մարդ էակը իսկապէս ազատ պիտի ըլլար, եթէ իրմէ վտարեր այս ախտերը եւ կարենար յաղթահարել ինքզինք ...: Ներքին թշնամին միշտ ալ ամէնէն վտանգաւորն է ու կործանարարը անհատի մը թէ ժողովուրդի մը համար...

.....

Խօսքը անհատին բարոյական շունչն է, ներքին մարդու արտացոլանքը....հոգեմտաւոր ինքնութեան եւ գիտակցութեան մակարդակը...Նոյնիսկ քննադատութիւնը պիտի ըլլայ շինիչ, կառուցողական....զայրոյթը պիտի ըլլայ զուսպ, կիրթ, ոչ թէ քանդող ու կործանարար....հայհոյախառն, ուրիշը անարգելու միտող, զայն վարկաբեկող: Խօսքը կրնայ քանդել կամ կառուցել, զայն արտաբերողը կ'ըլլայ կամ կործանարար ու խաւարիչ, կամ շինարար ու լուսաւորիչ....

.....

Ամէն միտք, մտածում, գաղափար կ'ընկալուի իւրովի, նայած թէ ի՞նչ հողի վրայ կ'իյնայ ան...Եթէ պարարտ է հողը, յայնժամ միտքը, մտածումը թէ գաղափարը կ'աճի, կը մեծնայ, կը գեղեցկանայ, կ'ընդարձակի....Իսկ եթէ անիկա իյնայ անարգաւանդ, խոպան հողի վրայ, յայնժամ նոյն այդ միտքը, մտածումը թէ գաղափարը կ'աղօտի, կը չորնայ....եւ ի չիք կը դառնայ...

.....

Մեծ ճշմարտութիւնները միայն յայտնատեսօրէն կրնան զգացուիլ...զանոնք դժուար թէ բառերով կարելի ըլլայ արտայայտել...Բառերը միշտ ալ կը պարագծեն անպարագծելին....

.....



Ցաւի մէջ ուրախութիւն կայ, ուրախութեան մէջ ցաւ կայ...Երկուորեակներ են կարծես այս երկու հակադիր հոգեվիճակները...Առանց մէկին, միւսը չի կրնար գոյութիւն ունենալ...

.....

«Թօթափել ստրուկը մեր մէջ...որուն բռնակալութիւնը այնքան սովորական է դարձած, որ շատ անգամ չենք ալ զգար զայն...Սակայն ան կը բռնանայ մեր ազատութեան վրայ՝ իր վախկոտութեամբ, անվստահութեամբ, քաջութեան պակասով, որոշում կայացնելու պատասխանատուութեան խուսափումով, անկախ եւ ինքնուրոյն ըլլալու արիութեան բացակայութեամբ...Ան կը բռնանայ մանաւանդ մեր մտքերուն վրայ, խափանելով անոր ազատ, անկաշկանդ, աննախապաշար մտածելու ունակութիւնը, մտածելու առանց հօտային հոգեբանութեան, առանց կարծրատիպերու...Կը բռնանայ մեր ինքնօրէն ըլլալուն վրայ...Մեր ազատ ինքնարտայայտութեան, ինքնիրագործման, արժանապատուութեան վրայ...Ստրկամտութեան այս ախտէն ազատուելով միայն մենք կը դառնանք ազատ, արժանապատիւ ազգ ու հայոց երկիր...»

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ 2016

## ՔԱՌԵԱԿՆԵՐ

### ՔԱՌԵԱԿՆԵՐ ԿԱՄ ՔԱՌԱՏՈՂԵՐ

Իմ մէջ քանի աշխարհներ կան  
Մէջ մէկ բառս աշխարհի համակ  
Ուր կան յոյզեր, խոհեր անչափ  
Աշխարհի մը նոր կերտելու չափ...Ե.Գ.

.....

Սերը չունի տարիք-մարիք  
Ինչպէս հողը մայր բնութեան  
Որ կը ծաղկի ամէն գարնան  
Նոր աւիշով մը հրաշալի:

.....

Վաղանցուկ է կեանքը համակ  
Ակնթարթն է լոկ իրական  
Որ կ'ապրի յար սրտիդ մէջ վառ  
Յոյսով, լոյսով մաքուր, անանց:

.....



Որքան խօսքեր շաղ կու տանք շռայլ  
Խօսքի միջուկն ո՞ւր է սակայն  
Խօսքի միջուկն է կորսուած  
Դարձեր աղմուկ ու աղաղակ....

.....

Ցաւը միայն քուկդ կ'ըլլայ  
Մաշկիդ նման լոկ սեփական  
Ուրիշն երբեք պիտ'չի կրնայ  
Կիսել ցաւդ կամ զգալ զայն:

.....

Չգայուն սիրտս վերքեր ունի  
Յագար ու մի ցաւեր ունի  
Բայց վերքերն այդ վառ երգերու  
Վերածելու գաղտնիքն ունի:

.....

Ծնունդ ու մահ՝ երկու թուական  
Իսկ անոնց մէջ կեանք մը համակ  
Խիւնդեր, ցաւեր, բիւր երագանք  
Մէկունը՝ քիչ, միւսինը՝ շատ:

.....

Թէկուզ ապրիս կեանք մը շքեղ  
Բիւր բարիքով երջանկաբեր  
Մահը պիտ'գայ զերթ վերջակետ  
Բոլորին ալ անխտորէն:

.....

Սի՛րտ իմ միամիտ, մի վրդովիր  
Դո՞ւն պիտ'փոխես աշխարհն պատիր  
Մարդ էակը միշտ իր շահին  
Եւ հաշիւին պիտի նայի:

.....

Ծիլ ու բողբոջ Նորափթիթ  
Գարնան ժպիտն են աշխարհին  
Ինչպէս մանուկն Նորածին  
Նորոգ շունչն է տիեզերքին:

.....

Աչքն է հոգուոյ ճիշդ հայելին  
Յարագատ ցոլքն անոր վճիտ  
Շիտակ մարդը պարզ հայեացքով  
Քեզ ներշնչէ վառ հաւատքով:



.....

Կեանքը կարծես երազ ըլլայ  
Մերթ վարդագոյն, մերթ գորշագոյն  
Վերջը նոյնն է, ինչ ալ ըլլայ  
Պիտի երթաս հողին տակ նոյն...

.....

Թէ պալատներ դուն ունենաս  
Ոսկի, արծաթ, անհատնում գանձ  
Յոս պիտ'թողուս գանձերդ համակ  
Յետդ տանիս տուածդ միայն:

.....

Բոյրդ, թոյրդ պիտի խամրին  
Թէ որ փոխես հողդ բնիկ  
Ինչպէս բոյսը արմատախիլ  
Աստ, անդ քշուի եւ հուսկ թօշնի:

.....

Սիրտն է մարդուն ճիշդ ուղեցոյց  
Որ զգայ միշտ թաքնաթաքուր  
Խորքն իրերուն, զորս աչքն երբեք  
Պիտ' չի կրնար յստակ տեսնել:

.....

Կեանքն է թատրոն մը ընդարձակ  
Մարդն իր դերը պիտի խաղայ  
Կան որ դերին հետ նոյնանան  
Դառնան անոր հետ հարազատ:

.....

Գեղեցիկը միշտ փնտռեցի  
Ան զիս հմայեց հեռուէ-հեռու  
Երբ մօտեցաւ, դարձաւ մտերիմ  
Ա՛լ չհմայեց, դարձաւ պարզուկ:

.....

Մարմինն է բանտ հոգւոյն համար  
Կաղապար մը կոշտ, անթափանց  
Երազն է թռիչք հոգւոյն համար  
Ճախրանք ազատ երկնասլաց:

.....



Մենութիւնը ահաւոր է  
Խորացում է ինքն իր մէջ  
Ազատօրէն թռիչք առնել է  
Հոգիներու անդունդին մէջ:

.....

Շիփ-շիտակ դուն պիտի քալես  
Քու ճամբայէդ պիտ' չջեղիս  
Ունկնդիր լոկ ներքին ձայնիդ  
Ոչ՝ ամբոխին խաբէպատիր:

.....

Կեանքը միշտ ալ վեր ու վար է  
Մէկ օր վերն ես, միւս օրն ալ վար  
Շարժումը այս կարելոր է  
Թէ ոչ ճահիճ դուն կը դառնաս:

.....

Խառնաշփոթ աշխարհին մէջ  
Ունկն դիր լոկ ներքին ձայնիդ  
Ան թող դառնայ քեզ ուղեկից  
Քեզ ուղեցոյց ամեն քայլիդ:

.....

2015-2016

## Գրական-Մշակութային

### ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝

### ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ

Արարման պահին  
Յոյզս լոյս դարձաւ  
Լոյսս բառ դարձաւ  
Բառս տող դարձաւ  
Երկնէն շող մաղեց  
Աղօթք մը դարձաւ  
Տողս թռիչք առաւ  
Անհունը պեղեց  
Անհունէն անդին  
Աստուածն որոնեց...Ե.Գ.

.....



Բառիս գգուանքը  
Տողիս բերկրանքը  
Ցոլանքն հոգիիս,  
Թրթիռը սրտիս  
Գինիի բաժակ  
Դարձան լուսահամ  
Որմէ ըմպեցի  
Կեանք մը համակ  
Անով միշտ արբշիռ  
Ու դեռ կ'արբենամ  
Մինչեւ իմ վերջին  
Ճաճանչն արեւի...Ե.Գ.

.....

Գրածիս քով տիեզերք էր  
Զգրածս  
Ըսածիս քով ովկիանոս էր  
Դեռ չըսածս  
Ըսուածին ու չըսուածին մէջ  
Մտամոլոր ես ման եկայ  
Որոնեցի ճշմարիտը  
Անսպառ էր անոր լոյսը  
Կիսատ-պռատ էր երկնուածը...Ե.Գ.

.....

Գրիչս ըլլար սրտի անթրոց  
Քար սիրտերու հնոցին մէջ  
Գրիչս ըլլար խոհի անթրոց  
Միտքերու խոր նիրհին մէջ...  
Թող ան ըլլար զանգ ու ղօղանջ  
Քար խիղճերու արթնացման  
Լոյս հեղեղէր վարդաբուրեան  
Չերթ արեգակ արդարութեան  
Մտներ ամէն խորշ, խորխորատ  
Լոյսը սփռէր ճշմարիտին  
Խաւարին դէմ շիլ կեղծիքին  
Անիրաւին, անարդարին...  
Գրիչ իմ խոնարհ, հաւատաւոր  
Քեզ փայլեցնեմ, ժանգ չկապես  
Դողամ վրադ գերթ աչքի լոյս  
Գուցէ բերես շող մ'արշալոյս  
Վառ գալիքի նշոյլ մը յոյս...Ե.Գ.

.....



Ես երգեցի լոյսը զուարթ  
Ի մտանել արեգական  
Լոյսն առտուան վարդաշուշան  
Արեգական լոյսը արդար....

Ես երգեցի լոյսը մտքի  
Լոյսը սրտի, յոյզի, խղճի  
Պեղեցի լոյսն անոնց ներհուն  
Որ մնաց միշտ ալ անհատնում...

Ես երգեցի լոյսն բարութեան  
Որ ճեղքէր մութն գիշերուան  
Համաձուլէր երկինք, երկիր  
Լուսօրհնութեամբ մը սիրալիր...

Ես երգեցի լոյսը սիրոյ  
Համայնատենչ ու սիրավառ  
Որ սիրտն սրտին ընկեր դառնար  
Չայն համբուրէր լուսագործով...

Ես երգեցի լոյսն տիեզերքի  
Բարեաց աղբիւր մը հրաշալի  
Որ կամարէր մարդն Արարչին  
Լուսոյ տաճար դարձնէր հոգին...Ե.Գ.

.....  
Ինչպէս հովիկն կը յայտնուի  
Անակնկալ  
Եւ կ'օրօրէ ծառ ու ծաղիկ  
Քնքշաբար  
Ինչպէս արեւը հուրհրան  
Յանկարծօրէն  
Ամպի ետին կը շողայ վառ  
Չերթ ջահ հրեղէն...  
Այնպէս ալ իմ ներշնչանքն է  
Քմահաճ իմ մուսան լուսէ  
որ յայտնուի գերթ անկոչ հիւր  
Քուն թէ արթուն, խոհերով բիւր  
Կու գայ յանկարծ եւ գիս կ'առնէ  
Հոսանքին մէջ իր լուսեղէն....Ե.Գ.

.....



Յաւիս հետ լուռ ընկեր եղայ  
Չայն պահեցի իմ սրտին մէջ  
Փայփայեցի զայն շարունակ  
Մտերիմս եղաւ հրակեզ...  
Սրտիս խորունկ գաղտնարանին  
Ան բանալին ունէր ոսկեայ  
Մերթ կը բանար, հետս զրուցեր  
Մերթ ալ սիրտս կ'այրէր ուժգին...  
Մերթ կրակ ու բոց ժայթքէր կարծես  
Մերթ հանդարտիկ ան կը միսար  
Մենութիւնս կը փարատէր  
Առանց ցաւի սիրտ կ'ըլլա՛յ բնաւ...  
Մինչեւ կեանքիս շունչը վերջին  
Թող ան ապրի իմ սրտին մէջ  
Մենութեանս ընկեր անկեղծ  
Չերթ աչքի լոյս զայն պիտ' պահեմ...Ե.Գ.

.....

Յոգիս աղօթք ունի խորունկ  
Արշալոյսին լուսահեղեղ  
Երբ աշխարհն լոյսով կ'օծուի  
Թէ իրիկուան թախծոտ պահուն  
Երբ արեւը մայր կը մտնէ  
Յորիզոնին ծիրանագեղ...  
Աղօթքս խոր պաշտամունք է  
Բնեութեան զարմանահրաշ  
Որուն փոքրիկ մէկ հիւլէն եմ  
Տիեզերքի գոյերուն հետ...  
Աղօթքս՝ զրոյց Արարչին հետ  
Մերթ անբառ է ինչպէս հառաչ  
Մերթ շշունջ է, հեւք սիրառատ  
Խոստովանանք է առ Աստուած...  
Յաւատքի խոր պատարագ է  
Մարդ եակին ու տիեզերքին  
Սիրոյ անհուն մատուցում է  
Անոնց խորին վեհ խորհուրդին...  
Սիրտես բխած աղօթքին մէջ  
Յոյսեր, լոյսեր կը հրավառին  
Տիեզերքին հետ կը նոյնանամ  
Կը միաձուլուիմ ամբողջին հետ...  
Յոգիս թեւեր առած մատչի  
Անհունէն վեր գահին Աստծոյ  
Յաղորդութեամբ խորհրդաւոր  
Սիրտը բանայ Արարիչին..





Կարծես աղօթքս նոյնիսկ անբառ  
Պիտի հասնի Անոր, գիտեմ  
Քանի համակ Սէր Է Աստուած  
Սիրոյ համար բառեր պէտք չեն...Ե.Գ.

.....

Ճախրեմ երկնի անհունին մէջ  
Յորիզոնին դեմ լուսահեղ  
Ես մօտենամ, ան հեռանայ  
Որպէս անհաս սիրոյ երագ...  
Թող թեւերս ըլլան յոգնաբեկ  
Թեւածեմ ես յար յաւիտեան  
Գրկեմ ազատ լուսին, աստղեր  
Անհուն երկինքէն արբեցած....  
Թող չըլլայ բնաւ սահմանագիծ  
Ազատ թռիչքիս դեմ յանդիման  
Թափառիմ յար անպարագիծ  
Ինչպէս ամպերն երկնաթափառ....  
Շնչեմ լիաթոք օդն ազատ  
Ընդարձակուիմ ես անկաշկանդ  
Ըմպեմ լոյսը սիրով անյագ  
Անհունանամ, անհունանամ....Ե.Գ.

.....

Աչքերուս մէջ իմ սիրտը կար  
Մերթ տխրամած, արտասուախառն  
Մերթ շողշողուն, արեւափայլ  
Մերթ զայրացած ու բարկացած  
Մերթ սիրափայլ, գորովալի  
Մերթ զսպուած յոյզերով լի....  
Մերթ խղճահար ու սրտաշարժ  
Մերթ անտարբեր, հայեացքով պաղ  
Մերթ յուզախռով եւ ալեխռով  
Մերթ ալ սիրոյ ճաճանչներով...  
Աչքերուս մէջ իմ սիրտը կար  
Յամակ աշխարհի մը անյատակ  
Բիւր խռովքներով ալետատան  
Բիւր սերերով յորդահոսան...  
Բայց քիչ անգամ մարդիկ տեսան  
Ու զգացին սիրտս որ կար  
Աչքերուս մէջ, ուր կը ցուար  
Խորախորհուրդ իր խորութեամբ....  
Աչքս՝ սրտիս հայելին պարզ: Ե.Գ.

.....



Օրերուս մէջ տագնապ, տուայտանք  
Օրերուս մէջ խինդ ու ծիծաղ  
Յոյսի, լոյսի շողեր անմար  
Ապրելու տենչ ու տենդ անյագ...

Օրերուս մէջ ժպիտ լուսէ  
Սեւը վանող, լոյսին կառչող  
Չարը վանող, բարին փնտռող  
Յաւատք անծիր ու աներեր...

Օրերուս մէջ գթառատ սեր  
Մարդ էակին, տիեզերքին  
Խիղճ տանջակոծ որ մրճահարէ  
Աղօթք անբառ ի խորոց սրտի...

Օրերուս մէջ խոյանք ու սլացք  
Ոգեղէն թռչիչ լազուրին մէջ  
Դէպ' անհունը, անհունէն վեր  
Ընդգրկելու ամբողջ համայն...

Ու խորացում հոգիիս մէջ  
Անդունդն ի վար խորխորատին  
Որ զիս ճանչնամ ես լիովին  
Գտնեմ հոգիս իմ լուսեղէն...

Օրերուս մէջ կախման կէտեր  
Որք այդպէս ալ մնացին կէտեր  
Դեռ կ'որոնեմ ես տենդագին  
Անվերջ, անհաս է իմ ուղին...Ե.Գ.

.....  
Արցունքը ի՞նչ բառ ունենայ  
Ամէն մէկ շիթն բառ ու տող է  
Ամէն մէկ շիթն կրակ ու բոց է  
Այրած սիրտէն հոսի վէտ-վէտ  
Որ զովանայ սիրտը ցաւէն  
Ծիածան կազմէ աչքերուն մէջ...  
Թէ հոսի ներս կաթիլ-կաթիլ  
Աղի արցունք լիճ մը դառնայ  
Յրդեհ որպէս բոցավառի  
Լափլիզելով սիրտը համակ...  
Յրդեհէն այդ երանի թէ  
Երգեր ծնին՝ կրակէ ծաղիկ  
Որ հուրհրատէ սրտերուն մէջ



Լոյսեր վառէ չնաշխարհիկ...Ե.Գ.

.....

Սրտիս մէջ փոքրիկ  
Այնքան թախիժ կայ  
Անամոք կարօտ  
Ցաւեր ու մորմոք  
Որ ինձ կը թուի  
Թէ յանկարծօրէն  
Ան պիտ' բռնկի  
Սիրտս լափլիզէ  
Չրդեհ մը անշէջ...  
Գուցէ անոր մէջ  
Ես յար հրկիզուիմ  
Կրակիս մէջ, հուրքիս  
Բուսնին ծաղիկներ  
Կրակէ ծաղիկներ  
Իմ մոխիրներես...  
Եւ փիւնիկի պէս  
Ես կրկին յառնեմ  
Ու դառնամ անմեռ  
Մեռնող եւ յառնող  
Յար վերածնող  
Յար հուրհրատող  
Մայր բնութեան պէս...Ե.Գ.

.....

Դափնեպսակ չէ փնտռածս  
Պատիւ, համբաւ չէ ուզածս  
Տողերս իմ սրտիս կանչն են  
Չոգիիս լուռ աղաղակն են...

Սիրտս յորդի բառերուս մէջ  
Լիցքաթափուի տողերուս մէջ  
Յետոյ հանդարտ տրոփէ լռիկ  
Խաղաղութիւն իջնէ յուշիկ...

Սրտիս վերքին սպեղանի են  
Բուժիչ դեղ ու բալասան են  
Առանց բառի հրաբուխն սրտիս  
Ո՞ւր պիտ' ժայթքէ լաւան հրաշէկ...

Տողերս իմ կենաց դեղ են...Ե.Գ.

.....



Լռութեան մէջ ես որսացի  
Գաղտնիքն կեանքի որ կը փախչի  
Ինչպէս ամպերը երկնացիր  
Կը քողարկեն անհունն երկնի...  
Լռութեան մէջ ես լսեցի  
Խոր հառաչը դալուկ աշնան  
Երփներանգ վառ թոյրերու ետին  
Յառաչն էր մեռնող կեանքի...  
Լռութեան մէջ խորզագացի  
Ձայնը հոգւոյս՝ խորհուրդ խորին  
Ժամանակէն վեր ու անդին  
Չիս կամարեր ողջ տիեզերքին...  
Լռութեան մէջ անհունացայ  
Յիւլէս դարձաւ Ամբողջին մաս  
Անդրանցեցի պահը փախչող  
Ակնթարթ մը՝ յաւերժացող...Ե.Գ.

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

2015-2016

## Ներգաղթ դէպի լեզուն

22 փետրվարի, 2016

Լուսինէ Աւետիսեան

### Գրականագէտ, գրաբարագէտ, թարգման, բանասիրական գիտութիւնների թեկնածու



Նորութիւն չէ, որ լեզու եւ ազգ հասկացութիւնները անքակտելիօրէն շաղկապուած են միմեանց, պայմանաւորուած միմեանցով, ներհիւսուած միմեանց մէջ, նոյնանիշ լինելու աստիճան սերտ: Իսկ բառարմատների ակունքներում, իսկապէս, լեզու բառն իր նախնական վիճակում նշանակել է ազգ: Օրինակ՝ ռուսերէնի ներկայ փուլի լեզու բառը, որ է язык (հնչում է եազիկ [yazik]՝ ի-ն ւաւելի մօտ ը-ին), հին սլաւոներէնում նշանակել է ազգ, ժողովուրդ: Սա պատահական երեւոյթ չէ: Թերեւս զարմանալի զուգահիւսութիւն

թուայ, որ այդ բառի հնչումը շատ մօտ է հենց մեր «ազգ» բառին...

Ազգի ինքնագիտակցութեան մէջ առաջին ու ամենակայուն արժէքը լեզուն է: Ուրեմն, ազգը ծագում-կազմաւորում եւ գոյութիւն է ունենում շնորհիւ լեզուի... Լեզուն ծնողն է ազգի... Եւ ծնունդից ի վեր ցանկացած ազգի ամենաապահով ապաստանը նրա լեզուն է, նրա մտածողութեան միակ անկողոպտելի կրիչը... Նա է ազգի ճշմարիտ հայրենիքը, որտեղից ոչ ոք չի կարող կազմակերպել տեղահանութիւն, եթէ նրա բնակիչներն իրենք այն չքեն...

...հնչալէս իւրաքանչիւր հայի ներսում չառաջանայ ըմբոստութիւն՝ ընդդէմ ԻՄՆԵՍԿՕ-ի արձանագրութեան, թէ արեւմտահայերէնը հաստատապէս վտանգուած՝ մեռնող լեզու է... Այսպիսի ախտորոշումն ու վճիռն արդէն սպանիչ են...

Այն դժոխային օրերին, երբ անհրաժեշտ էր հայ երեխաներին փրկել, ապա նաեւ ազգային կրթութեամբ ապահովել նրանց, օտարազգի առաքելուհիները իրենց մեծ սրտի թելադրանքով ջանք չխնայեցին, հրաւիրեցին հայերէնի ուսուցիչների, որպէսզի երեխաները գոնէ լեզուով մնային հայրենիքում ու չկտրուէին իրենց ինքնագիտակցութիւնը սնուցող աւիշից... Նաեւ իրենք սովորեցին հայերէն՝ նրանց հետ միայն նրանց լեզուով խօսելու համար, մարդկութեան մեծագոյն ողբերգութեան ականատեսի իրենց զգայուն եութեան մէջ այնպէս ամուր կրեցին այն, որ ծերանոցում վերջին տարիներն անցկացնող 90-նն անց Յեղվիգ Բիւլը, մոռանալով ազատօրէն տիրապետած մի քանի լեզուները՝ խօսում էր միայն հայերէն: Լինելով բողոքական կամ կաթոլիկ եկեղեցու հետեւորդներ՝ նրանք երբեք չփորձեցին իրենց հաւատքի ուղով տանել հայ երեխաներին, այլ Հայ Առաքելական Եկեղեցու սպասաւորների հրաւիրեցին՝ կազմակերպելով եութեամբ ու մտածողութեամբ ճշմարիտ հայի դաստիարակութիւն... Ուրեմն, ԻՄՆԵՍԿՕ-ի արձանագրութեան ենթապատկերում զո՞ւր էին ջանքերը, անիմաստ զոհաբերութի՞ւն եղաւ նրանց արածը... Հարիւր տարի առաջ թէ յետոյ, ո՞րն է տարբերութիւնը: Եթէ լեզուն պիտի մեռնէր, դրա համար ւաւելի բարենպաստ պայմաններ եղել են...



Հայը իր հանդէպ մարդկայնութեան ցանկացած դրսեւորման համար երախտապարտ է իր բոլոր սերունդների յիշողութեամբ...

Այսօր նոյնպէս առաքեալների կարիք կայ: Գուցէ թուայ, թէ միայն մեզ եւ մեր լեզուի համար... Սակայն կատարելիք մեծ գործերի կարիքն ունի աշխարհը: Փրկութեան հոգատար ձեռքերում ապաստանած մեր պապերի երախտագիտութիւնը այսօր մենք ենք յայտնելու՝ նրանց մասին գրելով, նրանց յուշարձանը նրանց իսկ ծննդավայրում կանգնեցնելով, նրանց գրականութեան՝ մեզ հարազատ երկերը թարգմանելով...

Մեծ ինդիրները, ճիշտ է, սկսում են լուծուել փոքրերից: Սակայն կարելի է կազմակերպուել ու գործել այնպէս, որ մեծ ու փոքր հարցերը լուծուեն զուգահեռաբար եւ միաժամանակ: Եթէ Մարիա Եակոբսէնի հայրենակիցները կամ գոնէ նրանց մեծ մասը նրան հազիւ թէ ճանաչէին, ապա հայ որբերին իր կեանքը նուիրաբերած Մարդու յուշարձանը, հայերի կողմից որպէս երախտագիտութեան ու յարգանքի փոքրիկ նշան նրա իսկ հայրենի քաղաքում տեղադրուելով, ոչ միայն կ'ընդգծի նրա անձը, կը վերապատմի նրա ինքնանուիրումի պատմութիւնը, որ անկասկած կը յուզի նրա հայրենակիցներին, այլեւ «կը ստիպի» ճանաչել այն ազգի պատմութիւնն ու ճակատագիրը, յանուն որի՝ ամէն ինչից իրեն զրկել է եւ դեռ կարող է զրկել Մարդը... Յուշարձանը նաեւ դառնում է մարդկութեան պատմութեան եւ մարդկայնութեան դասագիրք: Սկսում է փոխադարձ ճանաչողութիւնը, երկխօսութիւնը ուրիշ մի մակարդակում...

Այդպիսի յուշարձան են եւ կարող են դառնալ գրքերը: Ոչ լոկ «բեսթսելլեր»-ները, այլ նրանք, որոնք մե՛զ են անհրաժեշտ, որոնք կրում են յաւերժական արժեքներ եւ պետք է դաստիարակը դառնան նոր սերնդի:

Նրանք, ովքեր ապրում են Գերմանիայում, Ֆրանսիայում եւ այլուր, առանց դժուարութեան օգտուում են հէնց այդ լեզուով գրուած գեղարուեստական եւ մասնագիտական գրականութիւնից: Իսկ Հայաստանում տարիներով ուսումնասիրում են գերմաներէն, ֆրանսերէն եւ այլ լեզուներ (անշուշտ, ոչ ի զուր), որպէսզի կարողանան թարգմանել տասնամեակներ կամ տարիներ առաջ աշխարհի առջեւ բացուած գրականութիւնը: Այն էլ հարց է, արդե՞ք լեզուակիրների միջավայրից հեռու ապրելով՝ հնարաւոր է լեզուամտածողութիւնը լիովին ճանաչել՝ նրա բոլոր նրբութիւններով, դարձուածքների նրբերանգները շօշափելիօրէն զգալով, չէ՞ որ հարազատ թարգմանութիւնն այդ է պահանջում (իհարկէ, չի նշանակում, թէ այս պարագայում բացառում են բարձրորակ թարգմանութիւնները, պարզապէս ջանքերն են անհամեմատ մեծ...): Մինչդեռ այդպիսի թարգմանութիւն կարող են կատարել այդ լեզուն հարազատ միջավայրում որպէս մայրենի կիրառող հայերը, որոնք ոչ պակաս կատարեալ պիտի տիրապետեն իրենց մայրենիին:

Թումանեանն իրաւամբ ասում էր. «Թարգմանութիւնը ապակու տակ դրուած վարդ է», այսինքն՝ տեսնում ես, սակայն բոյրը չես զգում: Ուրեմն միայն զգայարաններիդ մի մասով ես ընկալում... Համաձայնելով հանդերձ Թումանեանի մտքի հետ, այնուամենայնիւ, այս համատեքստում իմ դիտարկումով եւ համոզմամբ՝ արեւմտահայերէն թարգմանութիւնը անզգալի լինելու աստիճան թափանցիկ ու նրբահիւս շղարշով խորհրդապասկուած տարաշխարհիկ ծաղկի է նման, եւ շղարշն անզօր է թաքցնել նրա բոյրը: Մարդկային մեծ ողբերգութեան ու մարդածին աննախադէպ աղէտի արդիւնքում արեւմտահայերէնի համար բնականօրէն ստեղծուեցին «լաւագոյն» պայմաններ՝ առանց կորուստների սեփական



լեզուից սեփական լեզուին փոխանցելու գաղափարներ, մտածութեան կերպեր, դարձուածքներ ...

Գուցէ առարկութիւն լինի, թէ նախ անհրաժեշտ է ապահովել հայերէնի կատարեալ իմացութիւնը, յետոյ անցնել թարգմանութեան գործին: Սակայն յաճախ անելի բարդ խնդրի լուծման ժամանակ է, որ ինքնըստիներեան լուծուում են նրա նախապայման խնդիրները: Իսկ Էյնշտեյնի շատ կարեւոր մի միտք հաստատում է, որ ցանկացած խնդրի կարելի է լուծել նրանից մէկ աստիճան վեր բարձրանալով միայն...

Լեզուն թարգմանն է մտքի, լեզուն մտքի ծնողն ու զաւակն է միաժամանակ... այն միջնորդ է թէ՛ նոյն, թէ՛ տարբեր լեզուներով մտածողների միջեւ: Եւ ռուսերէն լեզու բառի վերը բերած թռուցիկ ստուգաբանութեանը յաւելեմ, որ հին ռուսերէնում լեզու բառը պարզապէս նշանակել է թարգմանիչ...

Թարգմանութիւնը ոչ միայն լեզուն հարստացնում է նոր բովանդակութեամբ, այլեւ երիտասարդութիւն եւ ճկունութիւն է հաղորդում նրան... Առաջին գործը, որ արեց Մաշտոցը գրերի գիւտից յետոյ, թարգմանիչներ պատրաստելն էր ու ինքնուրոյն գրականութեան կողքին թարգմանական մեծ գրականութիւն ստեղծելը...

Մենք գուցէ շատ ենք ուշացել... Հարիւր տարի... Մինչդեռ Յեղասպանութիւնից յետոյ, ի հեճուկս բոլոր անբարենպաստ պայմանների, կազմակերպուած գործելու դէպքում փնտրուած թարգմանիչների հսկայական փաղանգ կ'ունենայինք աշխարհի բոլոր ծայրերում...

Բայց երբեք էլ ուշ չէ, պէտք է սկսել այսօր:

Սա այն դէպքն է, երբ պայմանական սկզբի համար ուղղակի նուիրեալներ են պէտք... Թարգմանութիւններ մինչեւ հիմա էլ կատարել են սփիւռքում, սակայն անհրաժեշտ է նպատակադրուել եւ նպատակամղուած կերպով թարգմանութիւնը որպէս լեզուի պահպանութեան, կատարելագործման կարեւոր միջոց ընտրել, արեւմտահայերէնը նաեւ նրանով սփիւռքում ամրացնել ու ամրակայել, այն ամենաանմիջական միջնորդ լեզուն դարձնել աշխարհը ընթերցելու համար, ինչպիսին էր եւ դեռ շարունակում է Հայաստանի Հանրապետութիւնում լինել ռուսերէնը: Միջնորդ լեզուի իր դերով ռուսերէնը այդպէս արմատաւորուեց Հայաստանի Հանրապետութիւնում: Այդպէս, շատ իրատեսական է ու հնարաւոր կը դառնայ ոչ միայն սփիւռքում արեւմտահայերէնի անելի եռանդագին ու բուռն գործածութիւնը, այլեւ Հայաստանի Հանրապետութիւնում նոյնպէս այն գիտութեան եւ ամենօրեայ ընթերցումի լեզուի վերածելը՝ հաւասարազօր պետական երկրորդ գրական լեզուին՝ արեւելահայերէնին...

Դժուար է, ծանր է, սակայն՝ հնարաւոր... Օտարազգի առաքելուհիները ինքնագրկումով ողբերգական տարիներին կարողացել են հայ երեխաներին ապահովել ազգային կրթութեամբ... Ուրեմն՝ մենք պարտաւոր ենք անել ամէն ինչ՝ լեզուն պահպանելու, զարգացնելու, նրա աշխարհասփիւռ մարմինը շքեղօրէն կենդանի պահելու համար... Եւ խօսքը վերաբերում է ոչ միայն արեւմտահայերէնին, այլեւ արեւելահայերէնին, որովհետեւ վերջինս նոյնպէս ապահովագրուած չէ:

Ներգաղթի կազմակերպումն ուրիշ մակարդակ է ենթադրում այսօր: Նախկին ներգաղթներին փոխարինելու պիտի գայ սրբազան մի Ներգաղթ, որի ուղղութիւնը ոչ թէ



դէպի Հայաստան, այլ՝ դէպի լեզուն Է լինելու, դէպի ամենաապահով ապաստանը... Նահանջը տեղի Է ունեցել օտարացման ճանապարհով՝ մտածողութեան ու լեզուի ցաւատանջ օտարման: Վերադարձը լինելու Է նոյն ճանապարհով՝ օտար եզերքից դարձով դէպի սեփական մտածողութիւնը, սեփական լեզուն ու լեզուամտածողութիւնը: Դրա լաւագոյն եղանակը թարգմանութիւնն Է... Թարգմանութիւնը օտար ափերում ներգաղթ Է դէպի Հայրենիք: Թարգմանութիւնը դարձ Է ուղիղ իմաստով, քանի որ նրա նպատակն Է նախ թարգմանողին «ստիպել» սեփական միտքը վերածել հայերէնի: Թարգմանիչը վերստին հայացողն Է ու հայացնողը: Որքան շատ թարգմանիչներ լինեն հայրենիքից դուրս, այնքան շատ հայացողներ ու հայացնողներ կ'ունենանք սահմաններ չունեցող մեր հայրենիքի համար:

Թարգմանել հայերէն, նշանակում Է ուղղութիւն վերցնել դէպի հայերէն, հետեւել կողմնացոյցին եւ մտածողութիւնը յստակ ուղղել ըստ հայերէնի...

Գուցէ շատերը նպատակակետին հասնելու ճանապարհին ոչ այդքան կարեւոր համարեն թարգմանութեան դերը, եւ դրա փոխարէն առաջարկեն աւելի հանգամանալից մտածել, թէ ինչպէս սփիւռքի նոր սերնդի հային գրել ու կարդալ տալ մայրենիով: Իմ պատկերացմամբ՝ դա կարելի Է անել հենց այսպէս՝ սկզբի համար նրան «թարգմանիչ» դարձնելով: Իհարկէ, մենք նրանից առայժմ կատարեալ թարգմանութիւններ չենք սպասում, բաւական Է միայն առաջին քայլը՝ սեփական միտքը վերածել սեփական մտքի... Համոզուած եմ, որ նախնական փուլում լեզուի կենսունակութեան վերականգնման գրաւական Է օտար լեզուից կատարելիք փոխադրութիւնը, եւ գուցէ վերջինս, իսկապէս, հենց որոնուող ճանապարհն Է: Թարգմանութիւնը լեզուամտածողութեան արտանկարչութիւնն Է, ես այսպէս եմ ընկալում: Արտանկարելու ընթացքում փորձ Է արւում թափանցել բնօրինակի հեղինակի մտայղացման մէջ, ընկալել նրա գծերն ու գոյները, կատարումի կերպն ու վերարտադրման եղանակը, ձեւաւորում Է որոշակի գեղագիտական ճաշակ եւ շրջահայեացութիւն: Նկարչութիւնն Էլ լեզու Է: Եւ սեփական ասելիքը արհեստավարժ կերպով ներկայացնելու համար այդ լեզուն սովորողը ձգտում Է ընկալել, իւրացնել, վերաիմաստաւորել նկարչական «դարձուածքներ», այլաբանական խօսքի ոճեր, արտայայտչամիջոցներ... Եւ կարծեմ նկարչական կրթարաններում որպէս մեթոդ արտանկարելու փորձեր են յանձնարարւում՝ ճարտարագործութեամբ աճելու, բարձրանալու, սեփական գաղափարները ճկունօրէն պատկերելու աստիճանին հասնելու համար: Այսինքն՝ սեփական միտքը մայրենի լեզուով լսելու համար տարաշխարհում այն կարիք ունի օտար մտածողութիւնը մայրենիի վերածելու, փոխադրութեան, ունեցած հնարաւորութիւններով օտար մտածողութեան արտապատկերումի, երկու լեզուամտածողութիւնների զուգահեռումի, բաղդատումի, նրանց գործուն համընթացութեան...

Այսօր հարցում եմ ուղղում Լիբանանի, Սիրիայի, Իրաքի իմ ազգակիցներին: Դուք կամ ձեզանից շատերը կարդում էք արաբերէն գրականութիւն: Արդէտք գրագետների նոր սերունդի շարքում ներկայ օրերում չկան գրողներ, ովքեր արծարծում են համամարդկային արժէքներ: Անկասկած կան, եւ հրատապ խնդիր Է նրանց հնարաւորինս արագ թարգմանելը հայերէն: Աշխարհը կարիք ունի երկխօսութիւնների, աշխարհը կարիք ունի յաշտութեան (յաշտ-գոհ) եւ ինքնահաշտութեան: Թարգմանութիւնը կը դառնայ ժամանակի, միջոցների եւ կարողութիւնների այն փոքրիկ զոհաբերութիւնը, որ կը միաւորի մեզ: Արաբ այդ գրագետը կը զգայ, որ իր միտքն ու գաղափարը գտնում են արձագանք այն ազգի հոգու տարողութեան մէջ, որի հետ հարիւր (եւ աւելի) տարի առաջ ցեղասպան իր կրօնակիցները վարւում էին





---

այնպէս, ինչպէս այսօր են վարւում իր հետ իր իսկ ազգակիցները: Մենք ճակատագրի եղբայրներ ենք: Մենք՝ նրա աւագ եղբայրը, աւելի, քան ԻՆՆԵՍԿՕ-ն ու աշխարհի բոլոր մարդասիրական կառոյցները միասին, ողբացել ենք հազարաւոր արաբների, քրդերի ցեղասպանութիւնը, աւելի, քան բոլորը մէկտեղ, կսկծացել ենք չքնաղ Մոսուլի աւերումի համար... աւելի, քան աշխարհի որեւէ անկիւն, մեր սիրտը տեղ ունի նրանց ապաստանելու...

## Անցուդարձ

### «Հայոց Պետականութիւնը Միասնութեան Առանցք» Լրագրողներու Համահայկական 8-րդ Համաժողովի Յայտարարութիւնը

20-24 Յոկտեմբեր 2016-ին



Երեւան – Ստեփանակերտ

Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հիմնադրութեան 25-ամեակին նուիրուած «Հայոց պետականութիւնը միասնութեան առանցք» խորագիրով լրագրողներու համահայկական 8-րդ համաժողովը տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի նախարարութեան

Նախաձեռնութեամբ եւ լրագրողներու համահայկական համաժողովները համակարգող մարմինի աջակցութեամբ:

Համաժողովը Հանգամանօրէն քննարկեց

Հետեւեալ խնդիրները.

– Համահայկական տեղեկատուական միասնական ցանցի ձեւաւորման կառուցակարգերը եւ լրատուամիջոցներու համագործակցութեան ուղիները՝ ճգնաժամային պայմաններուն մէջ:

– Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչներու եւ սփիւռքեան կառույցներու համագործակցութեան ուղիները:

– Սփիւռքի ներուժի ներգրաւումը Հայաստանի Հանրապետութեան պետականաշինութեան գործին մէջ:

– Պատկերասփիւռի, ձայնասփիւռի եւ ելեկտրոնային մամուլի համագործակցութեան հեռանկարները:

– Հայկական սփիւռքի գործակցութիւնը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան միջազգային ճանաչման հոլովոյթին մէջ:

– Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու պաշտպանութեան համակարգին հետ առնչուող խնդիրներու լուսաբանումը լրատուամիջոցներուն մէջ:

Լրագրողներու համաժողովը հաստատեց, որ համաժողովներու հետեւողական քննարկումները, Հայաստանի Հանրապետութիւն-Արցախ-սփիւռք համագործակցութեան խնդիրներուն շուրջ համահայկական լրատուամիջոցներու համախմբումը յանգեցուցին գործնական արդիւնքներու. Արցախի ապրիլեան քառօրեայ պատերազմին ընթացքին դրսեւորելով միասնական հզօր ուժ եւ պատասխանատու վարքագիծ՝ հայկական լրատուամիջոցները, մօտ 10 ժամ կաթուածահար ընելով հակառակորդի լրատուամիջոցներու գործունեութիւնը, աշխարհին մատուցեցին արցախեան իրադարձութիւններուն վերաբերեալ ճշմարիտ տեղեկատուութիւն:



### Համաժողովը Առաջնային Նկատեց՝

1.- Աշխատանքները նպատակաուղղել Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու միջազգային վարկի բարձրացման, Հայաստանի եւ հայութեան մասին համաշխարհային տեղեկատուական տարածքին մէջ դրական կարծիքի ու կերպարի ձեւաւորման ուղղութեամբ: Այդ նպատակով համագործակցիլ բազմազգ ընթերցողներ ունեցող երկիրներու օտարալեզու լրատուամիջոցներու լրագրողներու հետ եւ կարելիին չափ յաճախակի դարձնել անոնց այցելութիւնները Հայաստան:

2.- Հայ լրագրական մարդուժի ցանցային կարելիութիւններու լիարժէք օգտագործման եւ լրագրական մասնագիտական ներուժի համախմբուած աշխատանքի որդեգրման եւ զարգացման, պետական եւ համազգային տեղեկատուական մարդուժի լիարժէք օգտագործման միջոցով արդի տեղեկատուական ահռելի հոսքը նպատակաուղղել ի նպաստ հայուն եւ Հայաստանին:

3.- Հայկական լրատուամիջոցները իրենց առաքելութեան մէջ այսուհետեւ եւս Էական տեղ պետք է յատկացնեն տարբեր ձեւերով հայոց հարուստ եւ հնամենի պատմութեան ու մշակոյթի պահպանման եւ հանրահռչակման, ինչպէս նաեւ հայապահպանութեան, յատկապէս հայոց լեզուի անաղարտ պահպանման համար նոր միջոցներ որդեգրելուն:

4.- Շարունակել Հայոց ցեղասպանութեան ճանաչման, դատապարտման եւ հետեւանքներու վերացման նպաստող տեղեկատուութեան, Հայ դատի, դարաբաղեան տազնապի հետ կապուած զարգացումներու լուսաբանումը, վերլուծել եւ համակարգել լրատուամիջոցներուն մէջ առկայ փաստական նիւթերը:

### Համաժողովի Մասնակիցները Որոշեցին՝

– Համահայկական լրատուամիջոցներով սկսիլ «Դ՛՛՛ն ի՛՛նչ ըրած ես Ղարաբաղի համար» խորագիրով շարժում՝ ամբողջ աշխարհի հայութիւնը յանձնառու դարձնելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան օգնելու, ներդրումները խթանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ընկերային-տնտեսական, գիտակրթական եւ մշակութային կեանքը աւելի զարգացնելու առումով:

– Քարոզել, ներկայացնել եւ հետեւողականօրէն բարձրաձայնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը:

– Միջոցներ գտնել օտարալեզու մամուլի ներկայացուցիչները գործուղելու Ղարաբաղ՝ ճշմարտութիւնը աշխարհին ներկայացնելու համար:

– Նպատակաուղղուած աշխատանքներ տանիլ հայաստանակեդրոն սփիւռքի մասնագիտական կազմակերպման, Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման եւ Հայրենիքի հզօրացման համար, Հայաստանի Հանրապետութեան, Արցախի եւ սփիւռքի ջանքերը մէկտեղելու համար:

ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 8-ՐԴ

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ



## Սփիւռքի լրատուամիջոցներին Հայաստանի ներսը չի հետաքրքրում

Երեկ ծանոթացայ Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովի օրակարգին. ովքե՞ր են մասնակցում, ովքե՞ր են ելոյթ ունենալու, ի՞նչ թեմաներով, ո՞ր պաշտօնեաների հետ են նախատեսուած հանդիպումներ:



Միանգամից ասեմ, որ այսօր մեկնարկած համաժողովը ներկայացուցչական է, ինչպէս նախորդները, ընդգրկում է Սփիւռքի գրեթէ ողջ լրատուադաշտը՝ շուրջ երեք տասնեակ երկրներից աւելի քան 100 լրագրողներ:

Կասկած չկայ, որ այս համաժողովները, որոնք անցկացւում են Սփիւռքի նախարարութեան հովանու ներքոյ, կարելոր են: Ոչ միայն այն իմաստով, որ դրանց ընթացքում քննարկւում են հայկական աշխարհի լրատուամիջոցների առաջ կանգնած խնդիրներ ու մարտահրաւերներ, այլեւ որովհետեւ համաժողովը մեկտեղում է և

միմեանց կապում Սփիւռքի լրատուամիջոցներին, կապեր ստեղծում և ամրապնդում լրագրողների միջեւ:

Շատ լաւ է, որ համաժողովի մի մասը անցկացւում է Արցախում: Դա հնարաւորութիւն է տալիս Սփիւռքի լրատուամիջոցների ներկայացուցիչներին լինել նաեւ շփման գծում:

Սակայն շատ վատ է, որ Հայաստանի ներքին խնդիրները երբեք չեն դառնում Լրագրողների համահայկական համաժողովների քննարկումների նիւթ: Թերթէ՛ք բոլոր ութ համաժողովների օրակարգերը և չէք գտնի ծանրակշիռ ելոյթներ Հայաստանի և Սփիւռքի համար այնքան կենսական մարտահրաւերների մասին, ինչպիսիք են կոռուպցիան, անարդար ու կեղծուող ընտրութիւնները, քաղաքական ու տնտեսական մենաշնորհները, Հայաստանը մաշող ու արհւնաքամ անող արտագաղթը:

Քար անտարբերութիւն Հայաստանում մարդու իրաւունքների խախտումների, ապօրինութիւնների, ժողովրդավարութեան պակասի ու բազմաթիւ այլ սպառնալիքների ու մարտահրաւերների մասին, որոնք պէտք է հետաքրքրեն սփիւռքահայ մամուլին:

Թւրքիան, Ատրպէյճանը, Հայոց ցեղասպանութիւնը, Հայ դատը շարունակւում են զբաղեցնել Լրագրողների համահայկական համաժողովների օրակարգի մեծ մասը:

Այս համաժողովի շրջանակներում եւս լրագրողները հանդիպելու են Հայաստանի ու Արցախի բարձրաստիճան պաշտօնեաների հետ՝ Սերժ Սարգսեան, Կարէն Կարապետեան, Էդուարդ Նալբանդեան, Բակօ Սահակեան:

Սա էլ լաւ է:

Բայց լաւ չէ, երբ սփիւռքահայ լրագրողները չեն ցանկանում կամ չեն հետաքրքրւում հանդիպելու ընդդիմադիր կուսակցութիւնների ներկայացուցիչների, մարդու իրաւունքների պաշտպանութեան հարցերով զբաղուող մասնագետների, անկախ, ոչ իշխանական քաղաքագետների ու տնտեսագետների հետ: Դա անհրաժեշտ է Հայաստանում տիրող իրավիճակը ամբողջութեամբ, բոլոր գոյներով ընկալելու համար:



---

Տպաւորութիւն է ստեղծուում, որ սփիւռքեան լրատուամիջոցներին հետաքրքրում է Հայաստանի և Արցախի իրականութեան միայն իշխանական մասը:

Յուսանք, որ Լրագրողների համահայկական յաջորդ՝ 9-րդ համաժողովի օրակարգը կը ծածկի նաեւ Հայաստանի ոչ իշխանական կեսը, իսկ գեկուցաբերների շարքում կը լինեն նաեւ այդ ոչ իշխանական կեսի ներկայացուցիչներ:

Ամենաթունդ և հայրենասիրական կենացների պահին անգամ սթափ ձայնը օգտակար է:

Թաթուլ Յակոբեան